

2021

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ

ՀՀ Գեղարքունիքի մարզ Սևան համայնք, Թերակղզի, ոչ ափամերձ հատված

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ԱՐՏԱՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՏԱՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գեղարքունիք մարզ, ք. Սևան, Նաիրյան 148ա
Հեռ. բջջ. +374 98 88 2200

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Թերակղզի, ոչ ափամերձ հատված

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ԱՐՏԱՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----5

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն -----5

1.2 Հապավումներ -----5

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը -----6

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը -----8

1.5 Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրք -----12

1.6 Գեոդեզիական հանույթ -----13

1.7 Կառուցապատման սխեմա -----14

1.8 Նշահարման հատակագիծ -----15

1.9 Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ -----17

1.10 Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը. Հողային աշխատանքներ ----- 18

1.10.1 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները -----18

1.10.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում -----18

1.10.3 Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը -----19

1.11 Շահագործման փուլ -----20

1.11.1 Ջրամատակարարում -----20

1.11.2 Կոյուղի -----20

1.11.3 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ -----20

1.11.4 Ոռոգման և ջրցանման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը -----21

1.11.5 Մաքրման կայան -----22

1.11.6 Էլեկտրամատակարարում -----22

1.11.7 Կանաչապատման աշխատանքներ -----22

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 23

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը -----23

2.2 Հատուկ պահպանվող տարածքներ -----34

2.3 Մթնոլորտային օդ -----34

2.4 Ջրագրություն -----35

2.4.1 Սևանի ջրավազանային կառավարման տարածք -----36

2.4.2 Մակերևութային ջրեր -----37

2.4.3 Ստորերկրյա քաղցրահամ ջրեր -----38

2.4.4 Սևանա լիճ -----40

2.5 Սեյսմատեկտոնիկ պայմաններ -----43

2.6 Հողային ռեսուրսներ -----43

2.7 Կլիման և օդերևութաբանական պայմանները -----44

2.7.1 Ջերմաստիճանը -----46

2.7.2 Խոնավությունը -----46

2.7.3 Մթնոլորտային տեղումները	47
2.8 Կենսաբազմազանություն	48
2.8.1 Բուսական աշխարհ	48
2.8.2 Կենդանական աշխարհ	55
2.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը	59
2.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները	60
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	70
3.1 Ռիսկերի գնահատում	70
3.2 Արտանետումների աղբյուրները	71
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	71
3.3.1 Մթնոլորտային օդ	71
3.3.2 Զրային ռեսուրսներ	71
3.3.3 Հողային ռեսուրսներ	71
3.3.4 Թափոնների կառավարում	73
3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	73
3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ	74
3.3.7 Աղմուկ	74
3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	74
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	75
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	76
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	81
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	84

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝

1.4 Ձեռնարկողի փաստացի հասցեն՝

1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝

1.6 Հեռախոս՝

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

ԱՐՏԱՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 148ա

ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 148ա

ՀՀ Գեղարքունիքի մարզ Սևան համայնք, Թերակղզի, ոչ ափամերձ տարածք

+374 98 88 22 00

«ԶԵՆՈՆ-ԱՐՏ» ՍՊԸ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն,

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Գեոլարքունիքի մարզ, Սևան համայնք, Թերակղզի, ոչ ավիամերձ տարածք հասցեում նախատեսվում է կազմակերպել անհատական հանգստի գոտի:

Հանգստի գոտու աշխատանքային նախագիծը իրականացվել է գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության նպատակն է կազմակերպել ժամակակից բազմաֆունկցիոնալ հանգստի գոտի:

2014թվականի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հանգստի գոտու աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
- Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
- Բուսական աշխարհի մասին (1999),
- Կենդանական աշխարհի մասին (2000),
- ՀՀ Հողային օրենսգիրք (2001),
- ՀՀ Հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
- «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում

- Բնապահպանական կրթության մասին (2001),
- ՀՀ Ջրային օրենսգիրք (2002),
- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Թափոնների մասին (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
- ՀՀ Անտառային օրենսգիրք (2005),
- ՀՀ կառավարության «ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին»> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
- ՀՀ Կառավարության «ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին»> 29.01.2010թ. N 72- Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին»> ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշում
- «Սևան» ազգային պարկ պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկ»> պետական ոչ առևտրային կազմակերպիչության կանոնադրությունները հաստատելու մասին»> ՀՀ Կառավարության 30.05.2002թ. N 927-Ն որոշում
- «Սևանա լճի ավիամերձ տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգման միջոցառումների մասին»> 14.09.2006թ. N1386-Ն որոշում
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»> ՀՀ Կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշում
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
Հաշվի են առնվել նաև՝
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
- ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:
- ՀՀ կառավարության՝ 08.02.2018 թվականի N 108-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը

«Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Թերակղզի, ոչ ավիամերձ տարածք հասցեում նախատեսվող գոտու նախագծային աշխատանքներին հիմք են հանդիսացել Սևան համայնքի ղեկավարի կողմից 18.05.2021թ. տրված թիվ 20 նախագծման թույլտվությունը, /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N2478454 վկայականը:

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է «Սևան» Ազգային պարկ»-ՊՈԱԿ-ի՝ Սևանի թերակղզու ռեկրեացիոն գոտիում:

Հողատարածքի մակերեսը կազմում է՝ 0.31հա:

Հողամասի բնութագիրը՝ չկառուցապատված միջին թեքություններով, ծառապատված տարածք: Հողամասում առկա է փայտյա դեկորատիվ ցանկապատ՝ 220զմ ընդհանուր երկարությամբ:

Հողամասը գտնվում է 1905.0մ բացարձակ նիշերից բարձր ընկած հատվածում:

Տարածքի մուտքը՝ ք. Սևան, Հանգստի գոտի 4-րդ փողոցից, գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի Գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն:

Նախագծվող տարածքում նախատեսվում են հանգստի նշանակության փայտյա գերաններով հավաքովի քրթեջներ, բար-սրճարան, պահակակետ, շվաքարաններ, մաքրման կայան, հետիոտնային անցուղիներ: Հողամասը գտնվում է Սևանա լճից 300-400մ հեռավորության վրա:

Կառուցապատվող հողատարածքին սահմանակից հողատարածքները կառուցապատված են ժամանակավոր շարժական տնակներով:

Էռնավորությունը Երևան-Սևան-Իջևան Մ-4 ավտոմայրուղուց 300 մ է:

Ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի շինությունների առավելագույն բարձրությունը թույլատրվում է 7մ, կառուցապատման տոկոսը՝ 20-25%, որը համապատասխանում է «Կառավարության՝ 03.03.2011թ. «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտեվորման նախագիծը հաստատելու մասին» N 177-Ն որոշմամբ հաստատված տվյալ գոտու համար նախատեսված կառուցապատման չափորոշիչներին:

Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան, 1905.0 մ բացարձակ նիշից ցածր տարածքում հիմնական շինություններ չի նախատեսվում:

Տարածքում նախատեսվում են թվով 4 միատեսակ քրթեջներ, որոնք հավաքելու են փայտյա գեաններով և մեկ բար-սրճարան՝ սպասարկման համար, ինչպես նաև մաքրման

կայան:

Քոթեջների տեղադրման նիշերը պատկերված են գլխավոր հատակագծի և նշահարման հատակագծի վրա: Քոթեջները նախագծված է համաձայն ՀՀՇՆ 2-րդ 6.02-2006 սեյսմակայուն շինարարության նորմերի պահանջներին համապատասխան:

Նախատեսվում թվով 4 միատիպ քոթեջներ փայտյա գերաններով: Նախատեսված է կառուցել ժապավենային հիմքեր բուտաբետոնով, որմնախարիսխը բազալտյա քարից, ունեն երկու ննջասենյակ մեկ հյուրասրահ և մեկ սանհանգույց: Միջնորմերը նույնպես նախատեսված է իրականացնել թեթև փայտյա տարրերով:

Ներքին հարդարման աշխատանքները, հյուրասենյակի և ննջարանների պատերը նախատեսված են իրականացնել փայտանյութով, սանհանգույցում՝ բարձրորակ ցեմենտ ավազային սվաղ, այնուհետև երեսապատելով հախճասալիկներով, իսկ առաստաղը՝ ջրակայուն գիպսոստվարաթուղթ:

Բար-սրճարանը նույնպես նախատեսված է կառուցել բուտաբետոնյա ժապավենային հիմքերով, որմնախարիսխը՝ բազալտյա քարից, մեկ սրահ, մեկ սանհանգույց, շոքեբաղնիք և օժանդակ սենյակ: Միջնորմերը նախատեսված է իրականացնել թեթև փայտյա տարրերով:

Տարածքի արևելյան հատնածի ցանկապատին կից առանձնացված են շվաքարաններ, որոնք նույնպես նախատեսված է կառուցել թեթև փայտյա տարրերով:

- Հողամասի ընդհանուր մակերես՝ 0.31հա
- Հիմնական կառույցների մակերես 380.մ²,
որից՝
- Փայտյա կոնստրուկցիաներով քոթեջներ՝ 260.0մ²
- Շվաքարաններ 80,0մ²
- Մաքրման կայան՝ 20,0 մ²
- Պահակակետ՝ 20,0 մ²
- Մայթեր՝ 113մ²
- Ավազակոպճային շերտ՝ 193.43 մ²
- Հանգստացողների քանակ՝ 24 մարդ, որից՝
- Ակտիվ հանգստացողների քանակ՝ 11 մարդ
- Պասիվ հանգստացողների քանակ՝ 13 մարդ

Տարածքում առկա են բազմամյա խոտի տեսքով տեղ-տեղ խառը անձա բուսականություն և փշատերև ծառեր: Հողաբուսաշերտի հզորությունը կազմում է 15-20սմ: Հողային աշխատանքների ընթացքում այդ տարածքի բուսահողը 200մ³ ծավալով շինարարի կողմից նախատեսվում է պահել հատուկ վայրում և պաշտպանելու համար ծածկել համապատասխան ծածկով, որպեսզի չխառնվի շինարարական աղբի հետ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պահեստավորված բուսահողը կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում: Կանաչապատման աշխատանքները և նախատեսվող ծառաթփային բուսականության տեսակները կհամաձայնեցվեն «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ և կիրականացվեն առաջնորդվելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ

օրենքի դրույթներով:

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 2 տարի:

Հանգստի գոտու տարածքում տրանսպորտի կայանատեղին նախատեսված է մուտքային մասում, դեպի լիճ ուղղությամբ առկա է կանաչ գոտի և տնակներ, ինչը սահմանափակում է վիզուալ տեսադաշտը լողափից:

Հանգստի գոտու գազամատակարարում չի նախատեսվում, ջեռուցումը և տաք ջրամատակարարումը կիրականացվի հոսանքով:

1.4.1 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Որպես շինհրապարակ՝ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից՝ շինությունները, բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել՝ պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից՝ ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ , նաև մասնագիտացված:
2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:
3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:


ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարմամբ (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:
2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
3. Աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:
4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:
Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:
Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ՝ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

1.5 Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրք




1.6 Գեոդեզիական հանույթ




1.7 Կառուցապատման սխեմա



1.8 Նշահարման հատակագիծ



1.9 Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ



1.10 Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը. Հողային աշխատանքներ

Հանգստի գոտու շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2 տարվա ընթացքում:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Կախովի հարթակներ
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550 կամ համարժեք
- KAMA3 5511 և այլն
- Էքսկավատոր Hyundai 170W-7 /հիդրմուրճով /
- Շարժական կոմպրեսոր - ըստ պահանջի
- Էլ.եռակցման սարք - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 15 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 8 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Հողային աշխատանքներ՝

- Հանույթ՝ 350 մ³
- Հետլիցք՝ 110մ³

Ավելացած 240մ³ հողային զանգվածը կօգտագործվի տարածքի անհարթությունները հարթելու նպատակով:

1.10.1 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հիմնական աշխատանքների ծավալները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 . Հիմնական շինարարական աշխատանքների ծավալներ

NN	Աշխատանքների անվանումները	Չափման միավ.	Ծավալը
1	Փոսորակների իրականացում	մ ³	350
2	Ե/բ հիմքերի նախապատրաստական շերտ	մ ³	60,0
3	Ե/բ հիմնային սալ	մ ³	48,0
4	Ե/բ սյուներ	մ ³	18,0
5	Ե/բ պարզունակներ	մ ³	43,0
6	Ե/բ ծածկեր, հատակներ	մ ³	60,0
7	Ե/բ դիաֆրագմաներ, պատեր	մ ³	38,0
8	Ամրանավորում	տ	10,0

1.10.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.շ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ. N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 12 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ. T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 12 \times 0.025) \times 720 = 250.56 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.348 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 120

$$U_1 = 500 \times 0.0015 \times 120 = 90 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 340.56 մ³/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան՝ համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

ԻՏՍՍ և բանվորական անձնակազմը կոմունալ-կենցաղային կարիքները կհոգան շինհրապարակում ժամանակավոր նախատեսվող բիոզուգարաններից, որոնք շինաշխատանքների ավարտին կապամոնտաժվեն: Բիոզուգարանների կեղտաջրերը կհեռացվեն հատուկ նախատեսված ավտոմեքենայի միջոցով, պայմանագրային հիմունքներով, ըստ պահանջի :

1.10.3 Շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել ոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ տեղի են ունենալու առաջարկվող աշխատանքային նախագծի իրականացման կառուցման փուլերում: Տվյալ արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութեր, մասնավորապես խոսքը գնում է փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումների մասին:

Փոշու արտանետումները կառաջանան շինարարության հիմնական աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա: Հողային աշխատանքների արդյունքում գոյացող փոշին կարող է ազդել մթնոլորտային օդի որակի վրա, մասնավորապես, շինարարության սկզբնական փուլերում: Որոշ փոշի կարող է առաջանալ քամիների ժամանակ պահեստավորված շինանյութի տեղաշարժմամբ և շինարարական հրապարակի մոտակայքում մեքենաների շարժի ժամանակ: Հարկ է նշել, որ այս ազդեցությունները տեղի կունենան շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն կլինեն կարճաժամկետ ուստի, փոշեգոյացման ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կառուցապատման ժամանակ ունի չափավոր բացասական նշանակություն: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Շին. աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները անխուսափելիորեն որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել:

Նախնական գնահատման հայտում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները:

1.11 Շահագործման փուլ

1.11.1 Ջրամատակարարում

Համաձայն Վեոլիա Ջուր ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի նախատեսվող հանգստի գոտու ջրամատակարարումը կիրականացվի ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Թերակղզի, ոչ ավամերձ տարածքից մոտ 1620մ հեռավորության վրա գոյություն ունեցող $d=220$ մմ $P=1.5$ մթն. պ/էթ ջրատարից: Ջրաչափման հանգույցի համար նախատեսվում է կառուցել դիտահոր: Կոյուղու համակարգը բացակայում է, նախատեսվում է տեղադրել մաքրման կայան:

Ներքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից $\Phi 50;40;32;25;20$ մմ:

Արտաքին ցանցը մոնտաժվում է $\Phi 50$ մմ պոլիէթիլենային խողովակներից:

1.11.2 Կոյուղի

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծվող արտաքին ցանցի մեջ և արտաքին ցանցի միջոցով ուղղվում են դեպի մաքրման կայան: Ներքին և արտաքին ցանցերը անցկացվում են պոլիվինիլքլորիդային կոյուղու խողովակներից $\Phi 200;160;110;50$ մմ:

1.11.3 Խմելու-տնտեսական կարիքներ ջրապահանջի հաշվարկ

Խմելու տնտեսական կարիքների համար խմելու որակի ջրի հաշվարկը կատարվում է՝

$W_{\text{խմելու}} = n \cdot N \cdot T$ բանաձևով, որտեղ՝

n - 1 հանգստացողի համար ջրի ծախսի նորման է՝ 120 լ,

N - հանգստացողների քանակը՝ 11 մարդ,

T - հանգստի գոտում ապրելու ժամանակը տարվա կտրվածքով՝ 365 օր:

$W = n \times N \times T = 120 \times 11 \times 365/1000 = 481.8$ մ³/տարի կամ 1.32 մ³/օր

Օգտագործման ընթացքում ջրի անվերադարձ կորուստը կազմում է ≈ 12 %:

$W_{\text{կոր.}} = 481.8 \times 0.12 = 57.82$ մ³/տարի կամ 0.15 մ³/օր

Կենսաբանական մաքրման կայան ուղղվող հոսքաջրերի քանակը կկազմի՝ 1.17 մ³/օր կամ 427.05 մ³/տարի

Հաշվարկը իրականացված է հաշվի առնելով ՀՀ կառավարության՝ 03.03.2011թ. «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտեվորման նախագիծը հաստատելու մասին» N177-Ն որոշմամբ հաստատված տվյալ հանգստի գոտու առավելագույն զբաղվածության ցուցանիշները:

1.11.4 Ոռոգման և ջրցանման կարիքների համար ջրապահանջի հաշվարկը

Ջրի ծախսը 1 քառ.մ կանաչ տարածքի ջրման համար՝ n

n_1 ՝ գազոններ - 4 լ

Կանաչ տարածք (S)՝ 2100մ²,

ջրման օրական հաճախականությունը (K)՝ 1 անգամ,

ջրման օրերի թիվը տարվա կտրվածքով (N)՝ 180 օր:

Ջրապահանջը կկազմի՝

$$W_{\text{ոռ. ջրց}} = (n_i \times S_i) \times K = (4 \times 2100)/1000 \times 1 = 8.4 \text{ մ}^3/\text{օր}$$

$$W_{\text{ոռ. ջրց}} = 8,4 \times 175 = 1470 \text{ տարի}$$

Ոռոգման ջրցանման համար ջուրն ամբողջությամբ օգտագործվում է անվերադարձ:

1.11.5 Մաքրման կայան

Կենցաղային կեղտաջրերը սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում են ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Կոյուղու բակային ցանցը նախատեսված է միացնել մեկ հատ կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի, պոլիպրոպիլենային խողովակներով:

Ցանցերի վրա նախատեսված են դիտահորեր ստուգումներ կատարելու և հետագա շահագործելու համար:

Հանգստյան գոտու շրջակայքում կեղտաջրերի հեռացման կոլեկտոր չկա, ուստի հոսքաջրերի մաքրման համար ընտրվելու է կենսաբանական մաքրման կայան, որը կապահովի Սևանա լճի համար հաստատված նորմերը: Համաձայն մաքրման կայանի անձնագրային տվյալների մաքրված ջրերը համապատասխանում են ձկնատնտեսական ջրամբարների նորմերին և համապատասխան վնասագերծումից հետո կարող են օգտագործել նաև ոռոգման նպատակով, իսկ ավելցուկը լցնել լիճ:

Հարկ է նշել, որ ոռոգման շրջանում (180օր) մաքրված ջրերը օգտագործվելու են միայն ոռոգման նպատակով:

Ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում կեղտաջրերի առավելագույն օրական ծավալը նախատեսվում է 1.17 մ³/օր:

Նմանատիպ տեխնիկական ցուցանիշներով կայան է հանդիսանում «ՅՈՒԲԱՍ 30» տեսակի մոդուլային կենսաբանական մաքրման կայանը, սակայն պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է տեղադրել նաև նմանատիպ կամ ավելի լավ ցուցանիշներով մաքրման կայան: Նախատեսվում է տեղադրել «ՅՈՒԲԱՍ 30» տիպի մաքրման կայան, ինչը լիովին համապատասխանում է հանգստի գոտու հանգստացողների առավելագույն քանակին՝ 24 մարդ: Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունը ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 6 մ³/օր կամ 30 մարդ, այսպիսով տեղադրելով մեկ մաքրման կայան լիովին կապահովվեն դեպի մաքրման կայան ուղղվող է 1.17 մ³/օր հոսքաջրերի մաքրումն:

Աղտոտվածության ցուցանիշների և աղտոտող նյութերի քանակները հաշվարկված են յուրաքանչյուր հանգստացողի համար առաջացող աղտոտվածության տվյալների (ՇՈՒՊ – 2.04.01 – 85, աղյուսակ 25) և կեղտաջրերի օրական քանակի հիման վրա: Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

№	Ցուցանիշի անվանումը	Աղտոտող նյութերի քանակը, գ/օր	Կոնցենտրացիա, մգ/լ
1.	Կախված նյութեր	635	250

2.	ԹԿՊլրիվ	525.52	206.9
3.	Կապված ազոտ (ամոնիումի աղերի)	105.15	41.4
4.	Ֆոսֆատներ	43.3	17.07
5.	Քլորիդներ	118.2	46.55
6.	Մակերեսային ակտիվ նյութեր (ՈԱԲ)	32.7	12.9

Կայանի մաքրման արդյունավետությունը, որը, համաձայն տեխնիկական անձնագրի կազմում է 98% /կցված է հավելվածների բաժնում/, համապատասխանում է ձկնատնտեսական ջրամբարների պահանջներին:

Մաքրման կայանի տեղադիրքը ներկայացված է գլխավոր հատակագծի վրա:

«ՅՈՒԲԱՍ 30» կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանը ապահովում է մաքրման այնպիսի աստիճան, որը նախատեսված է Մակերեսային ջրերը աղտոտումից պահպանելու սանիտարական նորմերով և կանոններով (ГОСТ 25298-82) և ՇՆ և Կ-40-03-99 ու ՇՆ և Կ 2.04.03-85 «Ջրահեռացում Արտաքին ցանցեր և կառույցներ»:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ-4859-002-54899623-2003 պահանջներին: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ, պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից, որն ապահովում է դրանց աշխատանքի երկարակեցությունը (ոչ պակաս քան 50 տարի):

1.11.6 Էլեկտրամատակարարում

Համաձայն Սևան էլ. Ցանցի հետ պայմանագրի՝ տարածքում առկա է էլեկտրամատակարարում:

1.11.7 Կանաչապատման աշխատանքներ

Տարածքում գոյություն ունեն փշատերև ծառեր, որոնք պահպանվելու են:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում համաձայն ՀՀ կառավարության՝ 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի

դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 5 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոմատներով, պայմանագրային հիմունքներով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի «Սևան» տարածքային հատվածում, ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասում, Սևան քաղաքից 2 կմ հեռավորության վրա:

Տարածքին բնորոշ է հիմնականում հարթ ռելիեֆ, գրունտների արագացումը հավասար է 0.2-ից 0.4ց: Լանդշաֆտի թեքությունները և լանջերի ուղղվածությունը բարենպաստ են կառուցապատման համար: Տարածաշրջանի մակերևույթի բարձրությունները տատանվում են 1898-2000մ սահմաններում: Ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ափը՝ 1905.0մ բացարձակ նիշում ձեռք կբերի խիստ կտրտված ուրվագիծ:

Մոտ 55 հա ընդհանուր մակերես ունեցող հատվածներ նախատեսվել են 1 հարկանի կառուցապատման գոտու համար: Ընդ որում նշված մեկ հարկանի կառուցապատման գոտու համար ընտրվել են լճի ափին մերձակա տեղամասերը: Նախատեսվել են մոտ 35 հա ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ, թե լողափի բուֆերային գոտուն հարող տարածքներում, թե ճանապարհաեզրերին և թե ներթափային հատվածներում: Սպորտային կառույցների համար ընտրվել են համեմատաբար բարձր գրունտների արագացում՝ 0.4 ց ունեցող հատվածները: Տարածքային հատվածում է գտնվում Սևան համայնքի քաղաքային հիվանդանոցը: Նախագծային լուծումները ընտրվել են առավելագույնս հաշվի առնելով գոյություն ունեցող օրինական, ինչպես նաև ինքնական կառույցներն ու հողամասերը: Գոտիավորումն արվել է այնպես, որպեսզի չառաջացնի առկա կառույցների հետ կապված խնդիրներ, միևնույն ժամանակ փորձ է արվել ներգրավվել դրանք առաջարկվող կանոնակարգված հատակագծային կառուցվածքի մեջ: Նախատեսվել է 1.4 հա մակերես ունեցող տարածք՝ միջին հարկայնության կառուցապատման համար:

Որպես պարտադիր պայման, առանձնացվել են նաև հանրության կողմից անարգել

օգտագործման համար նախատեսված լողափնյա տարածքներ /ընդհանուր լողափնյա տարածքի 20%-ը, որը կազմում է մոտ 7 հա:

Կառուցապատման չափորոշիչներ

Գոտու անվանումը	Գոտու առանձին հատվածներ	Գոտու ընդհանուր տարածքը քմ	Հանգստացողների քանակ	Կառուցապատում քմ, %		Կանաչապատում քմ, %	Կառուցապատման խտության գործակից
ՀԿԳ -1	ՀԿԳ-1/1	1218.02	9	280.14	20-25	937.88	0.1-0.15
	ՀԿԳ -1/2	2967.14	23	682.44		2284.70	
	ՀԿԳ -1/3	3468.82	27	797.83		2670.99	
	ՀԿԳ -1/4	4706.52	36	1082.50		3624.02	
	ՀԿԳ -1/5	27535.67	211	6333.20		21202.47	
	ՀԿԳ -1/6	9225.02	71	2121.75		7103.27	
	ՀԿԳ -1/7	6912.52	53	1589.88		5322.64	
	ՀԿԳ -1/8	77029.9	591	17716.88		59313.02	
	ՀԿԳ -1/9	20430.08	157	4698.92		15731.16	
	ՀԿԳ -1/10	14294.29	110	3287.69		11006.60	
	ՀԿԳ -1/11	38926.16	298	8953.02		29973.14	
	ՀԿԳ -1/12	10407.36	80	2393.69		8013.67	
	ՀԿԳ -1/13	5938.2	46	1365.79		4572.41	
	ՀԿԳ -1/14	8878.32	68	2042.01		6836.31	
	ՀԿԳ -1/15	10977.95	84	2524.93		8453.02	
	ՀԿԳ -1/16	15795.39	121	3632.94		12162.45	
	ՀԿԳ -1/17	6302.89	48	1449.66		4853.23	
	ՀԿԳ -1/18	7827.9	60	1800.42		6027.48	
	ՀԿԳ -1/19	6197.93	48	1425.52		4772.41	
	ՀԿԳ -1/20	8081.45	62	1858.73		6222.72	
	ՀԿԳ -1/21	10661.84	82	2452.22		8209.62	
	ՀԿԳ -1/22	5155.17	40	1185.69		3969.48	
	ՀԿԳ -1/23	6698.3	51	1540.61		5157.69	
	ՀԿԳ -1/24	7681.1	59	1766.65		5914.45	
	ՀԿԳ -1/25	10286.84	79	2365.97		7920.87	
	ՀԿԳ -1/26	12630.65	97	2905.05		9725.60	
	ՀԿԳ -1/27	16417.87	126	3776.11		12641.76	
	ՀԿԳ -1/28	19324.24	148	4444.58		14879.66	
	ՀԿԳ -1/29	20713.1	159	4764.01		15949.09	
	ՀԿԳ -1/30	47796.76	366	10993.25		36803.51	
	ՀԿԳ -1/31	16903.98	130	3887.92		13016.06	
	ՀԿԳ -1/32	22518.05	173	5179.15		17338.90	
	ՀԿԳ -1/33	1892.92	15	435.37		1457.55	
	ՀԿԳ -1/34	4201.38	32	966.32		3235.06	
	ՀԿԳ -1/35	7770.35	60	1787.18		5983.17	
	ՀԿԳ -1/36	2567.43	20	590.51		1976.92	
	ՀԿԳ -1/37	1615.5	12	371.57		1243.94	
	ՀԿԳ -1/38-ա	2064.32	9	144.50		7	
	ՀԿԳ -1/39	1376.78	11	316.66	20-25	1060.12	77

	ՀԿԳ -1/40-ա	5520.47	24	386.43	7	5134.04	93	
	ՀԿԳ -1/41	1498.01	11	344.54	20-25	1153.47	77	
	ՀԿԳ -1/42-ա	16486.35	72	1154.04	7	15332.31	93	
	ՀԿԳ -1/43	4369.32	33	1004.94	20-25	3364.38	77	
	ՀԿԳ -1/44-ա	80774.29	353	5654.20	7	75120.09	93	
Ընդհանուր ՀԿԳ -1		614046.55	4363	124455.44	-	489591.11	-	-
ՀԿԳ -2	ՀԿԳ -2/1	32634.25	283	7505.88	20-25	25128.37	75-80	0.2-0.26
	ՀԿԳ -2/2	18311.93	159	4211.74		14100.19		
	ՀԿԳ -2/3	12347.93	107	2840.02		9507.91		
	ՀԿԳ -2/4	17506.6	152	4026.52		13480.08		
	ՀԿԳ -2/5	24729.26	214	5687.73		19041.53		
	ՀԿԳ -2/6	11248.78	97	2587.22		8661.56		
	ՀԿԳ -2/7	41515.42	360	9548.55		31966.87		
	ՀԿԳ -2/8	559.83	5	128.76		431.07		
	ՀԿԳ -2/9	3572.69	31	821.72		2750.97		
Ընդհանուր ՀԿԳ -2		162426.69	1408	37358.14	-	125068.55	-	-
ՀԿԳ -3		14060.91	492	2530.96	18	11529.95	82	0.56
ԺԿԳ-1	ԺԿԳ -1/1	38346.71	166	8819.74	20-25	29526.97	75-80	0.1-0.15
	ԺԿԳ -1/2	31987.97	139	7357.23		24630.74		
	ԺԿԳ -1/3	17855.32	77	4106.72		13748.60		
	ԺԿԳ -1/4	11907.84	52	2738.80		9169.04		
	ԺԿԳ -1/5	2588.02	11	595.24		1992.78		
	ԺԿԳ -1/6	4206.33	18	967.46		3238.87		
	ԺԿԳ -1/7	1229.88	5	282.87		947.01		
	ԺԿԳ -1/8	2391.45	10	550.03		1841.42		
	ԺԿԳ -1/9	2067.28	9	475.47		1591.81		
	ԺԿԳ -1/10	2154.15	9	495.45		1658.70		
	ԺԿԳ -1/11	2628.82	11	604.63		2024.19		
Ընդհանուր ԺԿԳ -1		117363.77	509	26993.67	-	90370.10	-	-
ԺԿԳ -2	ԺԿԳ -2/1	21707.54	188	4992.73	20-25	16714.81	75-80	0.2-0.26
	ԺԿԳ -2/2	13191.93	114	3034.14		10157.79		
	ԺԿԳ -2/3	17703.87	153	4071.89		13631.98		
	ԺԿԳ -2/4	25396.44	220	5841.18		19555.26		
	ԺԿԳ -2/5	33154.44	287	7625.52		25528.92		
	ԺԿԳ -2/6	23318.54	202	5363.26		17955.28		
	ԺԿԳ -2/7	5783.42	50	1330.19		4453.23		
	ԺԿԳ -2/8	6558.65	57	1508.49		5050.16		
	ԺԿԳ -2/9	12302.59	107	2829.60		9472.99		
	ԺԿԳ -2/10	293.48	3	67.50		225.98		
Ընդհանուր ԺԿԳ -2		159410.90	1382	36664.51	-	122746.39	-	-
ՍՊԳ	ՍՊԳ /1	44134.55	1103	22067.28	50	22067.28	50	0.5
	ՍՊԳ /2	31224.58	781	15612.29		15612.29		
	ՍՊԳ /3	2221.33	56	1110.67		1110.67		
	ՍՊԳ /4	1381.96	35	690.98		690.98		
	ՍՊԳ /5	6469.53	162	3234.77		3234.77		
Ընդհանուր ՍՊԳ		85431.95	2136	42715.98	-	42715.98	-	-
ԱՌԳ		26159.10	118	4970.23	19	21188.87	81	0.27

ԱԿԳ	34324.10	154	6521.58	19	27802.52	81	0.36
ՀՕԿԳ	395892.52	-	39589.25	10	356303.27	90	-
ԼԲԳ	339304.72	-	-	-	67860.94	20	-
ՊՄՀՊԳ	151191.58	-	15119.16	10	136072.42	90	-
ԲԼՊԳ	153.13	-	-	-	-	-	-
ԼԳ	353041.18	-	-	-	-	-	-
ՏԳ	252914.57	-	189685.93	75	63228.64	25	0.15
ՏԳ Մայթեր,անցուղիներ	84304.86	-	67443.89	80	16860.97	20	-
ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՏԻՆԵՐ	2790026.53	10561	594048.72	-	1571339.72	-	-

Կենտրոնական գոտու լանդշաֆտները առաջացել են Սևանա լճի ջրի մակարդակի իջեցման արդյունքում: Մինչև իջեցումը լճի մակարդակը 1916.0 մ էր: 2010թ. հունվար ամսվա դրությամբ լճի մակարդակը գրանցվել է 1899.23 մ ` 16.77 մետրով ցածր սկզբնական նիշից: Ներկայիս կենտրոնական գոտու լանդշաֆտները ձևավորվել են բացված հատակային գրունտների և դրանց վրա անտառաշերտերի ստեղծման արդյունքում, որոնց ցամաքային տարածք լինելն այսօր չի գերազանցում 60 տարին: Այսպիսով կենտրոնական գոտու լանդշաֆտների էկոլոգիական համակարգերը չեն կարող պարունակել առաջնային բնական, էնդեմիկ կենսատեսակներ: Նշված լանդշաֆտները՝ մարդկային գործոնների ազդեցության ներքո բնական պայմանների փոփոխության և միջամտության արդյունք են:

Դրա հետ մեկտեղ, կենտրոնական գոտու լանդշաֆտները այն տարածքներն են, որոնց կազմում է գտնվում ջրային ափամերձ և ցամաքային ջրամերձ գոտիների էկոհամակարգերի անմիջական փոխազդեցության անցումային շերտը: Համապատասխանաբար, կենտրոնական գոտու տարածքների օգտագործման ռեժիմի հաստատումն ու կիրառումը կարևոր խնդիր է Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն և հոգևոր արժեք ունեցող, քաղցրահամ ջրերի ռազմավարական նշանակության շտեմարանի և էկոհամակարգի բնական զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրականացման համար:

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են ջրից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, սապրոպելիտային տափաստանացված, ինչպես նաև զգալի տարածքներ զբաղեցնող թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները:

Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում առկա են լեռնատափաստանային չոր, իսկ 2400.0մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Համաձայն Լանդշաֆտի կրոպական կոնվենցիայի՝ «Լանդշաֆտը - մարդու կողմից ընկալվող տարածք է, որի հատկությունները՝ բնական կամ մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք են»:

Նախագիծը մշակվել է հետևելով Կոնվենցիայով սահմանված հիմնական սկզբունքներին, մասնավորապես, նախագիծն և պլանավորման յուրաքանչյուր միջոցառումն ուղղված են լանդշաֆտի նպատակահարմար որակի ձևավորմանը: Նախագծային լուծումները ընտրվել են լանդշաֆտների որակի բարելավման կամ, առնվազն չվատթարացման նկատառումներից: Փորձ է արվել կանխատեսել և վերլուծել լանդշաֆտների այն փոփոխությունները և հնարավոր ձևափոխումները, որոնք կլինեն նախագծի իրականացման դեպքում, որից հետո ճշգրտվել են նախագծային առաջարկությունները: Պլանավորման միջոցառումները համապատասխանեցված են տարածքների առանձնահատկություններին:

«Սևան» ազգային պարկի տարածքը բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

- Արգելոցային,
- Արգելավայրային,
- Ռեկրեացիոն,
- Տնտեսական:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի 1-ին ռեկրեացիոն և 1-ին տնտեսական գոտիներում (տես Նկար 4¹):

1) Ռեկրեացիոն գոտի.

Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը 4 753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածք:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, բուսական ու կենդանական տեսակների վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան:

Ռեկրեացիոն գոտու հիմնական տարածքի ռելիեֆը (բացի Սևանա թերակղզուց) հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1910 մետր բարձրությունը: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության: Ռեկրեացիոն գոտու հյուսիս-արևմտյան ափերը քիչ են կտրտված, մեղմաթեք են, որը հարմար է լողափերի համար, իսկ արևելյան ափերը (Արեգունու լեռնաշղթայի) կտրուկ խորանում են և լողափերի համար այնքան էլ հարմար չեն: Այստեղով անցնում է նաև տեկտոնական խզվածքային գոտին:

Տարածքը հիմնականում պատված է անտառային տնկարկներով, որոնցում գերակշռում են սոճու, բարդու, թեղու և չիչխանի ծառուտները:

Ռեկրեացիոն գոտին ընդգրկում է Ձկնագետ, Դրախտիկ, Գեղամբակ և Աղբերք գետերի գետաբերանային հատվածները:

¹ «Սևան» ազգային պարկի կառավարման պլան

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, իսկ գրունտայինը՝ 57 կմ: Տարածքով անցնում է 7.7 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր: Արեգունու ափամերձ հատվածում՝ Դրախտիկ-Շորժա, անցնում է գազատարի 12.8 կմ հատվածը:

Սևանա թերակղզու բարձունքում է գտնվում X-XI դարի Սևանի վանքը, ինչպես նաև ՀՀ Նախագահի, Գրողների միության, Կապուտաշյա Սևան, Արևիկ և այլ հանգստյան տները: Գոտու տարածքում շատ են սպասարկման ոլորտի օբյեկտներ՝ հյուրանոցներ - 7, ռեստորաններ և սրճարաններ՝ 200-ից ավելի, առևտրի խանութներ և կրպակներ՝ 250-ից ավելի և այլն: Գոտու Արտանիշ թերակղզու տարածքում է գտնվում Նկարիչների միության հանգստյան տունը:

«Սևան» ազգային պարկի տնտեսական գոտու տարածքներն ընկած են հետևյալ հատվածներում՝ Սևան քաղաքից Ծովագյուղ, Լճաշենից Հայրավանք, Նորատուս թերակղզուց Ծակքար գետ, Արգիճի գետից Ծովակ գյուղ և Գեղամասար գետից Արտանիշ թերակղզի, ինչպես նաև Արեգունու հարավ-արևմտյան լեռնալանջերի վրա: Այս հատվածներում տնտեսական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 11 184 հա :


2) Տնտեսական գոտի.

Տնտեսական գոտու տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 11266 հա:

Տնտեսական գոտու 1-ին հատվածի տարածքը կազմում է 388 հա: Այն գտնվում է «Սևան» ազգային պարկի հյուսիս-արևմտյան մասում՝ ազգային պարկի սահմանի և 1-ին ռեկրեացիոն գոտու միջև (Փամբակի լեռնաշղթայի Արջուտ լեռնաբազկի հարավ-արևելյան լանջից մինչև Ծովագյուղ): Տնտեսական գոտու 1-ին հատվածի սահմանի նկարագրությունը համապատասխանում է այս հատվածում ազգային պարկի և 1-ին ռեկրեացիոն գոտու սահմանների նկարագրությանը:

Տնտեսական գոտու այս հատվածի ռելիեֆը, թերակղզուց մինչև Սևան-Դիլիջան հին ճանապարհի վերջը թեք է, իսկ մնացած մասը՝ հարթ: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, որտեղ ծառատեսակներից գերակշռում են սոճին, բարդին, ակացիան և թեղին: Հատվածի միջնամասով, 5.3 կմ երկարությամբ, անցնում է երկաթգիծը, իսկ եզրամասով 5.5 կմ երկարությամբ՝ Դիլիջան-Սևան ավտոմայրուղին: Ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 11.3 կմ: Հատվածի տարածքով անցնում է 4.0 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր և 700 մետր երկարությամբ անցնում է Ձկնագետ գետը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի տնտեսական գոտու տարածքներում թույլատրվում են խախտված էկոհամակարգերի վերականգնման, ինչպես նաև էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող միջոցառումները կազմակերպության կողմից սահմանված վայրերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արդյունագործական նպատակներով ձկնորսությունը և խեցգետնաորսությունը, կողմնակի անտառօգտագործումը և անտառշահագործումը, այդ թվում՝ հատապտուղների, սերմերի, տնտեսական արժեք ներկայացնող բուսատեսակների, թափուկի հավաքը, խոտհունձը, ինչպես նաև մեղվապահության նպատակով տարածքները վարձակալության տրամադրումը, կառավարման պլանում անտառային ֆոնդի գույքագրման տվյալների հիման վրա տարեկան կտրվածքով սանիտարական և խնամքի հատումների հատատեղերի հատկացումը, սանիտարահիգիենիկ



Պայմանառնշաններ

Գոտիներ

- Ոնկրեացիոն
1 - 8
- Տնտեսական
1 - 13
- Պահպանական գոտի
- Ազգային պարկի սահմանը

Ճանապարհներ

- Պետական
- Սարգային
- Չամայնրային

Ջրագրական ցանց

- գետեր
- վտակներ
- չորացող գետեր
- Արվա-Մեան բունել

- Լճեր
- Բնակավայրեր

- Էլեկտրական գծեր
- Գազի գիծ
- Երկաթգիծ

- Գոտիների սահմանային կետեր

2.2 Հատուկ պահպանվող տարածքներ

Ինչպես նշվել է, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, որը տեղակայված է «Սևան» ազգային պարկի սահմաններում:

Պարկը գտնվում է հայկական հրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա:

«Սևան» ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

2.3 Մթնոլորտային օդ

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Սևան համայնքում հաշվառված բնակչության թվաքանակը կազմել է 24919 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,2մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,02մգ/մ³:

Աղ. 3 *Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
10-125	0.4	0.05	0.03	1.5
10-50	0.3	0.05	0.015	0.8
<10	0.2	0.02	0.008	0.4

2.5 Զրագրություն

Սևանա լիճը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա : Այն աշխարհի՝ քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է՝ Հարավային Ամերիկայի Տիտիկակա լճից հետո: Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 46.8 մ է, ամենախոր վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Զրի ծավալը 32, 92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9 մ): Սևանա լիճը Հայկական բարձրավանդակի՝ մեծությամբ երրորդ լիճն է՝ Վանա լճից և Ուրմիոյից հետո: Ի տարբերություն այդ երկուսի՝ բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ որոնցից են՝ Արգիճի, Մասրիկ, Գավառագետ, Կարճաղբյուր, Վարդենիս, Ձկնագետ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են՝ Արեգունու, Սևանի, Վարդենիսի, Գեղամա լեռները: Սևանա լճի ջրերը Հրազդան գետի միջոցով ոռոգում են Արարատյան դաշտը: Հրազդան գետի վրա կառուցված 6 էլեկտրակայանները ձևավորում են հանրապետության ամենամեծ՝ Սևան-Հրազդան կասկադը: Խորհրդային իշխանության տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է, ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: 1978 թվականին ստեղծվել է Սևան ազգային պարկը: Զրի մակարդակը վերականգնելու համար կառուցվել է Արփա-Սևան (48.3 կմ, 1963–81 թվականներ), ապա՝ Որոտան-Արփա ջրատարները (21, 6 կմ, 2004 թվական):

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:

Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ²: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգմաննպատակներով վերցվող ջուրը:

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա- կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով:

Երկրաբանա-հիդրոերկրաբանական և երկրաֆիզիկական տեսանկյունից՝ Սևանի ավազանի տարբեր տեղամասեր ունեն ինքնատիպ երկրաբանական կառուցվածք և դրա հետ կապված տարբեր հիդրոերկրաբանական պայմաններ: Այդ տարբերությունները հիմնականում արտահայտվում են երկրաբանական կառուցվածքով, լիթոլոգիական կազմով, ծագմամբ, նստվածքառաջացման պայմաններով և առանձին տեղամասերի գեոմորֆոլոգիական տանձնահատկություններով: Դրա շնորհիվ, որոշ տեղամասերում տարածված են միայն գրունտային ջրեր, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ագխաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան ստորգետնյա գրունտային ջրեր, որոնք կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ինչպես նաև չորորդական հասակի լճային նստվածքների հետ:

Ստորգետնյա գրունտային ջրերը գտնվում են 100մ-ից խորը հորիզոններում:


Տարածաշրջանի մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ: /<<Սևան>> ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի հաստատման մասին>> ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշում/

2.4.1 Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ԶԿՏ գտնվում է Հայաստանի արևելյան մասում: Սևանա լճի ավազանը զբաղեցնում է Հայաստանի ամբողջ տարածքի 1/6 մասը: Սևանի ԶԿՏ մակերեսը կազմում է 4721 կմ² : Սևանի ԶԿՏ շրջապատված է Գեղամա լեռներով (արևմուտքից), Վարդենիսի լեռներով (հարավից), Արեգունու լեռներով (հյուսիս-արևելքից) և Սևանի ու Արևելյան Սևանի լեռնաշղթաներով (արևելքից), որոնց բարձրությունը հասնում է մինչև 3598մ (Վարդենիս): Սևանի ԶԿՏ ձգվում է հյուսիսային լայնության 39°52'-ից մինչև 40°41' և արևելյան երկայնության 44°45'-ից մինչև 45°59': Հյուսիսից հարավ առավելագույն ձգվածությունը կազմում է 90կմ, արևելքից արևմուտք՝ 103կմ: Սևանի ավազանի առանձնահատկություններից մեկը ջրիավաք ավազանի և լճի մակերեսների փոքր հարաբերությունն է (3:1) աշխարհի այլ խոշոր լճերի հետ համեմատությամբ (10:1):

Սևանի ԶԿՏ-ը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները և Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում

հիմնականում կոմունալ-կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը: 2019 թվականին Սևանի ԶԿՏ-ում մակերևույթային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 18 դիտակետ- տում,



որոնցից 38.9%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դասի, 50.0%-ում՝ 3-րդ դասի, 5.56- ական տոկոս՝ 4-րդ և 5-րդ դասի: Նախորդ տարվա համեմատ 2019 թվականին ջրի որակի դասային փոփոխություններ դիտվել են Մասրիկ, Վարդենիս, Մարտունի,

Գավառագետ գետերի 5 դիտակետում:

Աղտոտված գետերից են Մասրիկը, Սոթքը, Մարտունին:

Մեանի ՋԿՏ թափվող վնասակար նյութեր, 2018թ.



- Սալֆատներ
- Քիմիկատներ
- Կախյալ նյութեր
- Քլորիդներ
- Այլ

Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթո ղինգն իրականացվել է 11 դիտակետում, որից 6-ում՝ նաև որակի մոնիթո ղորինգ:

2018 թվականին այս ջրավազանից ջրառը կազմել է 53.4 մլն մ3, որից 26.1%-ը բաժին է ընկնում մակերևութային, 73.9%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (44.4%), խմելու

(37.8%) և ձկնաբուծության (12.1%) նպատակներով:

2.4.2 Մակերևութային ջրեր

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև հատվածում գնահատվել է

«լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով:

Սոթք գետի ջրի որակը Սոթք գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով և ալյումինով:

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում գնահատվել է

«լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով և մանգանով:

Մարտունի գետի ջրի Գողիովիտ գյուղից վերև հատվածում գնահատվել է

«միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և ալյումինով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և երկաթով:

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և վանադիումով:

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և վանադիումով:

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկածեն գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով, մոլիբդենով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով:

2.4.3 Ստորերկրյա քաղցրահամ ջրեր





Սևանի ՋԿՏ-ում հիդրոերկրաբանական մշտադիտարկումները կատարվում են 11 ստորերկրյա ջրաղբյուրներում: Կենտրոնական հրաբխային լեռնաշղթաների հիդրոերկրաբանական մարզում առկա է 5 դիտակետ՝ բնաղբյուր: Ակունք գյուղի վարչական տարածքի N1053 դիտակետում 2019 թվականին աղբյուրի բարձր ծախսերը նկատվել են ապրիլ-հուլիս, իսկ ցածրը՝ հոկտեմբեր-մարտ ամիսներին: Նշված ժամանակահատվածում ծախսերը տատանվել են 0.74-0.82լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 10%:

Գավառ քաղաքի վարչական տարածքի N 2014 բնաղբյուրի ծախսը 2019 թվականին տատանվել է 1.61-1.9լ/վ կազմելով շուրջ 15%: Այստեղ ընդհանուր հանքայնացումը տարեկան կտրվածքում փոփոխվել է 0.33-0.36գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 2.87-3.93 մգ.համ/լ: Նշված դիտակետերում դիտարկումները սկսվել են 2011թ (N1053) և 2015 թվականին (N2014):

Նշված ժամանակահատվածում միջին տարեկան ծախսերը N1053 դիտակետում տատանվել են 0.65-0.86լ/վ, իսկ N2014-ում՝ 1.55-1.6լ/վ համապատասխանաբար կազմելով 24% և 3%: Ընդհանուր հանքայնացման բարձր նշանակությունը՝ 376մգ/լ նկատվել է 2018թ նոյեմբերին, իսկ ցածրը՝ 303մգ/լ 2017թ նոյեմբերին:

Սևանի գոգավորությունում դիտարկումները կատարվել են 6 դիտակետերում, որոնք շատրվանող հորատանցքեր են: Համաձայն 2019 թվականին դիտարկումների, տարվա ընթացքում դիտակետերի ծախսի փոփոխությունները աննշան են և գրանցվել են 8.03- 9.12լ/վ (N1810) և 6.58-6.81 և/վ (N1812): Ծախսերի ամենաբարձր նշանակությունը նկատվում է սեպտեմբեր ամսին, իսկ ցածրը՝ դեկտեմբեր- հունվար ամիսներին: Մայիս- օգոստոս ամիսներին նկատվում է ծախսերի սինուսիդի տեսքի փոփոխություններ, որը պայմանավորված ոռոգման նպատակով օգտագործող հորերի աշխատանքով: 2011- 2018թթ նշված հորատանցքերի միջին տարեկան ծախսերը տատանվել են 7.5-11.2լ/վ (N1810) և 4.3-6.7լ/վ (N1812) սահմաններում: Բոլոր դիտակետերում միջին տարեկան ծախսերը փոփոխվում են իջեցումներով և բարձրացումներով, չի նկատվում բարձրացման կամ իջեցման ընդհանուր միտում: Աննշան փոփոխություններ են նկատվում նաև ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության նշանակություններում:

Ներկայումս Սևանի ՋԿՏ-ում չեն նկատվում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններ: Դրանք աննշան են և պայմանավորված են բնական պայմաններով: Ամռան շրջանում հորատանցքերի ծախսերի սինուսիդի տեսքի փոփոխությունները պայմանավորված են ոռոգման հորերի աշխատանքով, որոնց քանակը ավելանում է տարիների ընթացքում: Հնարավոր է, որ արդյունքում ստացվի ստորերկրյա ջրերի գերշահագործում և դադարի Սևանա լճի սնումը ստորերկրյա ջրերի խորքային հոսքի հաշվին: Արդյունքում կավելանա Սևանա լճի աղտոտման ընթացքը Այդ պատճառով առաջարկում ենք ոռոգման նպատակով հնարավորության սահմաններում օգտագործել Մասրիկ, Արգիչի և Գավառագետ գետերի ջրերը:




2.4.4 Սևանա լիճ


2019 թվականի հուլիսին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 14 դիտակետում, ջրի նմուշները վերցվել են ափամերձ և ափից կենտրոն գոտիներից: Ափամերձ գոտուց ջրի նմուշները վերցվել են և՛ մակերևութային (մինչև 0.5 մ խորության) և՛ հատակամերձ շերտերից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, ՍԹԿ-ն գերազանցել են ԹՔՊ-ի, ամոնիում իոնի, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: ԹՔՊ-ի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան գերազանցվել է՝ 1.2-1.4 անգամ, ամոնիում իոնինը՝ 1.3 անգամ, պղնձինը՝ 1.7-3.7 անգամ, քրոմինը՝ 4.4-6.6 անգամ, վանադիումինը՝ 4.4-5.3 անգամ, սելենինը՝ 2.8-3.3 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների տիրույթներում:

Սևանա լճում կապտականաչ ջրիմուռների աճի հնարավոր պատճառ հանդիսանում են լճի ջրի վաղ տաքացումը և լճում բավարար քանակությամբ կենսածին տարրերի՝ հատկապես ֆոսֆորի առկայությունը: Վերջին տարիներին դիտվում է Սևանա լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի աճ:

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում նաև կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:


Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները ներկայացված են ստորև գրաֆիկական տեսքով.






Դիտակետ

Փոքր Սևան







մակերևույթ (0.5մ)
 հատակամերձ (65-80մ)

Մեծ Սևան




մակերևույթ (0.5մ)
 հատակամերձ (29-32մ)



2.5 Սեյսմատեկտոնիկ պայմաններ

Նկար 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սեյսմատեկտոնիկ պայմանները և սողանքային գոտիները





2.7 Հողային ռեսուրսներ

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրորելիտային տափաստանացված:

Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Նախատեսվող գործունեության վայրի հողերը՝ Նկար 7:

Նկար 7. Նախատեսվող գործունեության վայրի հողի կատեգորիան



2.7 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման չորային է: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ: Ձմեռային եղանակային ռեժիմը ձևավորում է մթնոլորտի յուրովի թթվածնային ռեժիմ, դիտվում են թթվածնի կշիռային պարունակության մաքսիմում արժեքներ, որոնք աստիճանաբար նվազում են ըստ բարձրության: Ձմռան սեզոնում լիճը ծածկվում է սառույցով, և լճի ջրային ավազանի ազդեցությունը ափամերձ ցամաքի թերմիկ ռեժիմի վրա զգալի նվազում է: Ամռանը գերակշռում է «արևոտ չափավոր խոնավ» եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Տարածաշրջանը լանդշաֆտային, եղանակ-կլիմայական, միկրոկլիմայական պայմաններով շահավետորեն տարբերվում է մյուսներից: Տարածքը բաց է և չի էկրանավորվում բարձր լեռնազանգվածներով: Տարվա ընթացքում տարածաշրջանում դիտվում է արևափայլի մեծ տևողություն (2747 ժամ), ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների տարեկան դրական բալանս:

Կլիմայաբուժության պայմաններ

Սևանի ափերի կլիման յուրահատուկ է: Լեռնաշղթաներով շրջափակված լինելու պատճառով, համեմատաբար քիչ տեղումներ են լինում:

Սևանի կլիման չափավոր չոր կլիմաների կարգին է պատկանում: Արեգակի ճառագայթման տևողությամբ (2500-2800 ժամ/տարեկան) Սևանը գերազանցում է բոլոր հայտնի առողջարանային վայրերին և նույնիսկ ևրոպական հոչակավոր արևաբուժական առողջարաններին: Սևանի ավազանի տարբեր հատվածների կլիմայաբուժության պայմանները գնահատվել են՝ օգտագործելով «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության» ԳՀԻ կլիմայաբուժության պայմանների համալիր վերլուծության առաջավոր մեթոդները: Այդ մեթոդով տրվում է մարդու ջերմային զգացողության գնահատականը՝ էկվիվալենտ-էֆեկտիվ (էէՋ) և ռադիացիոն էկվիվալենտ - էֆեկտիվ (ՌէէՋ) ջերմաստիճանների որոշումով (էկվիվալենտ - էֆեկտիվ ջերմաստիճանը՝ օդի ջերմաստիճանի, խոնավություն և քամու համատեղ ազդեցության դեպքում մարդու ջերմային զգացողության գնահատականն է):

Սևանի հյուսիս - արևմտյան, հյուսիսային, հյուսիս - արևելյան ափերում (Շորժայից մինչև «Ինտուրիստ մոթել») և հարավ - արևելյան ափում (Ծովակից մինչև Արեգունի գյուղը) սահմանափակող գործոն է համարվում քամու արագությունը (> 5 մ/վրկ): Ուժեղ քամիների պատճառով այդ ափերում արևաբուժության օրերի թիվը տատանվում է ամռան ամիսներին 5-8 %: Մյուս ափերում, որտեղ քամու արագությունը տատանվում է 2,74,5 մ/վրկ, կլիմայաբուժության պայմանները բարենպաստ են (օդաբուժության համար բարենպաստ օրերի թիվը ամռան ամիսներին տատանվում է 2,0-25,0%, առավելագույնի հասնելով հարավային 29 ափում): Ավելի բարենպաստ են արևաբուժության պայմանները, որոնք տատանվում են 15,0-18,0%-ից մինչև 43,0-64,0 %, առավելագույնի հասնելով հարավային ափում: Բալնեոլոգիական բուժման համար պիտանի հանքային աղբյուրներով շատ հարուստ է Սևանի ավազանը: Հանքային ջրերի խոշոր պաշարներ կան Գավառ քաղաքի տարածքում, Գավառագետի կիրճում (Սևանի հանքավայրը): Բուժիչ ջրերը նման են Հանքավանի, Եսենտուկիի ջրերին և կարող են օգտագործվել բալնեոլոգիայի, ինչպես նաև խմելու - բուժման նպատակով:

Հանքային ջրի աղբյուրներ կան Լիճք, Մարտունի, Ն. Գետաշեն, Վ. Գետաշեն, Երանոս բնակավայրերի միջև ընկած տարածքում (Լիճքի հանքավայր) և Ծովագյուղից հարավ ընկած տարածքում:

Հանքային ջրերի օգտագործման ակտիվ գործոններն են՝ հանքային ջրի մեծ պաշարները, ռեկրեացիոն շինարարության համար ռեզերվային տարածքների առկայությունը, տարածքի կլիմայաբուժության համար բարենպաստ պայմանները (օդաբուժության համար կոմֆորտային օրերի թիվը կազմում է 15.0-55.0%): Սևանա լճի ավազանում բուժման կազմակերպման համար ակտիվ գործոն է տորֆի խոշոր հանքավայրերի (Գիլիի հանքավայրը, Մարտունու տարածաշրջանի հանքային ցեխերը) առկայությունը, որոնց թերապևտիկ արժեքը Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԸ-ում և Երևանի Գյուղատնտեսական Ակադեմիայում ապացուցվել է ֆիզիկական-քիմիական և կլինիկական ուսումնասիրությունների միջոցով: Ամենատարբեր հիվանդությունների (օստեոմիելիտներ, խրոնիկ պոլիարտրիտ,

կանացի և մաշկային հիվանդություններ և այլն) բուժման փորձը տորֆային ցեխերի կիրառմամբ հաջողությամբ իրականացվել է Վարդենիսի հիվանդանոցում:

Սևանի ավազանում ձմեռային սպորտի (լեռնադահուկային) կազմակերպման պայմանները բարենպաստ են: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դահուկային սպորտով զբաղվելու սեզոնի տևողությունը կապված է 10 սմ և ավելի ճյան շերտի առկայության հետ:

2.7.1 Ջերմաստիճանը

Թերմիկ ռեժիմը բավականին բարենպաստ է՝ տարեկան միջին ջերմաստիճանը 5.3°C, ամենատաք ամսվանը 15.9°C (օգոստոս), ամենասառը ամսվանը՝ -5.5°C (հունվար): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -33°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 33°C:

Աղյուսակ 6. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
		Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Սևան լճային (լճ.)	1917	-5.5	-5.3	-1.9	3.5	8.4	12.4	15.7	15.9	12.8	8	2.5	-2.8	5.3	-33	33

2.7.2 Խոնավությունը

Տարածաշրջանում հարաբերական խոնավությունը առավելության ժամերին 62 % է, իսկ ցերեկը հասնում է 55%-ի: Միջին խոնավության ցուցանիշները տատանվում են 68-75% միջակայքում:

Տարեկան միջին արժեքը 72%: Ձմռանը քամիները հիմնականում ուղղված են դեպի լճի կենտրոնը, որի հետևանքով խոնավությունը հեռացվում է ավիամերձ գոտուց:

Աղյուսակ 7. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Սևան լճային (լճ.)	74	75	74	71	74	73	73	73	69	68	71	74	72	67	63

2.7.3 Մթնոլորտային տեղումները

Տարածաշրջանում տարվա տաք կեսին դիտվում են 349 մմ տեղումներ, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով:

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 484 մմ: Ձյան ծածկույթը սկսում է ձևավորվել նոյեմբերի երրորդ տասնօրյակից, իսկ 2000 մ-ից բարձր Գեղամա լեռների հյուսիսային լանջերին՝ հոկտեմբերի երկրորդ կեսից: Հաստատուն և կայուն ձյան ծածկույթը ձևավորվում է դեկտեմբերին, որի միջին բարձրությունը հունվար-փետրվար ամիսներին հասնում է 25-35 սմ-ի, իսկ ափամերձ գոտում 10-20 սմ- ի:

Աղյուսակ 8. Մթնոլորտային տեղումները %

Բնակավայրի, օրերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը		միջին ամսական օրական առավելագույն , մմ											Ձյան ծածկույթ		
			ըստ ամիսների											Սարեկան	Առավելագույն տառնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձյան ծածկույթի օրերի քանակը
	Յունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Սևան լճային (լճ.)	14	19	28	53	87	76	49	37	33	43	29	16	484	71	121	-
	13	24	33	29	38	51	56	55	35	55	31	16	56			

Քամի

Աղյուսակ 8

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվար կային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկանգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20 16	50 17	100 18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15			
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7							
		ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3					
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4							
		հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3,1					
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8							
		հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2,7					
			4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7							

Արեգակնային ճառագայթումը

Աղյուսակ 9

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ ²												
	ըստ ամիսների												
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան գումարային
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևան	356	453	700	818	987	978	995	917	695	547	375	311	8133

Արևափայլի տևողությունը

Աղյուսակ 10

Բնակավայրի, օդերևութաբա- նական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևանա լիճ	148	148	178	185	245	294	324	311	267	229	161	139	2629

Անարև օրերի քանակը

Աղյուսակ 11

Բնակավայրի, օդերևութաբա- նական կայանի անվանումը	ըստ ամիսների												Տարեկան
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Սևանա լիճ	3	2	2	2	0,4	0,1	0,1	0,1	0,5	1	2	3	16

Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ

Աղյուսակ 12

Աշխարհագրական լայնություն, աստ. հս. լ.	Բարձրությունը ըստ ամիսների. աստիճան											
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
38	30,8	39,2	49,8	61,7	70,8	75,3	73,6	66,2	55,1	43,6	33,6	28,7
40	28,8	37,2	47,8	59,7	68,8	73,3	71,6	64,2	53,1	41,6	31,6	26,7
42	26,8	35,2	45,8	57,7	66,8	71,3	69,6	62,2	51,1	39,6	29,6	24,7

2.9 Կենսաբազմազանություն

2.9.1 Բուսական աշխարհ

Սևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում տափաստանային է, տափաստանների բնորոշ բուսականություն հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստամանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխր ագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկ (*Hypholoma fasciculare*), ճանճասպան հովազային (*Amanita pantherina*), շամպինյոն 1411 դեղնամաշկ (*Agaricus xanthodermus*), գոմաղբասունկ թեփուկավոր (*Coprinus picaceus*), սարդոստայնասնկեր (*Cortinarius*), թելիկասնկեր (*Inocybe*), շարքասնկեր (*Tricholoma*) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Ռեյիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փոքր թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (*Juniperus depressa*) և այլն: Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 9 -ում: Աղյուսակում ընդգրկված բույսերի որոշ տեսակները ներկայացված են Նկար 8 -ում:

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
1	Ազնվամորի	Rubus idaeus
2	Աղվեսագի եղեգանման	Alopecurus arundinaceus
3	Անթառամ ոսկեգույն	Helichrysum callichrysum
4	Ասպիրակ աղեղներ	Spiraea crenata
5	Արոսենի սովորական	Sorbus aucuparia
6	Գառան դմակ մեծ	Sedum telephium
7	Գերիմաստի	Viburnum lantana
8	Դաշտավլուկ սոխուկակիր	Poa bulbosa
9	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica
10	Եղինջ երկտուն	Urtica dioica
11	Թրաշուշան կովկասյան	Gladiolus caucasicus
12	Լավատեր թուրինգիական	Lavatera turingiaca
13	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
14	Խատուտիկ Ստեվենի	Taraxacum stevenii
15	Շորենի սովորական	Berberis vulgaris
16	Կակաչ արևելյան	Papaver orientale
17	Կակաչ հայկական	Papaver armeniacum
18	Կակաչ սակավատերև	Papaver paucifoliatum
19	Կատվադաղձ մերկ	Nepeta nuda
20	Կատվադաղձ Մուսինի	Nepeta mussini
21	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
22	Չազարատերևուկ սովորական	Achillea millefolium
23	Չիրիկ փոքր	Iris pumila
24	Մատիտեղ ճնճղուկի	Polygonum aviculare
25	Մատուռի ուղիղ	Potentilla recta
26	Նեղտերևի	Chamaenerium angustifolium
27	Շուշանաբանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
28	Շուշանաբանջար ոսկեզոծ	Chaerophyllum aureum
29	Պտեր արական	Dryopteris filix mas
30	Սեզ սպիտակ	Agrostis alba
31	Սիզախոտ մարգագետնային	Phleum pratense
32	Սրոհունդ ալպիական	Hypericum alpestre
33	Սրոհունդ խոցված	Hypericum perforatum
34	Սրոհունդ մշտիկատերևանման	Hypericum hyssopifolium
35	Մասրենի Չրաչի	Rosa hrachiana
36	Մասրենի առատափուլ	Rosa spinosissima
37	Վիկ մկան	Vicia cracca
38	Տանձենի կովկասյան	Pyrus caucasica
39	Տուղտավարդ թավրիզյան	Alcea tabrisiana
40	Փրփրուկ վեցաթերթ	Filipendula hexapetala
41	Օշինդր արևելյան	Artemisia orientalis
42	Օշինդր դառը	Artemisia absinthium

Նկար 8. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները



Տողտավարդ թավրիզյան - *Alcea tabrisiana*



Սրտիկա մշտիկատերևանման - *Hypericum hyssopifolium*



Վիկ մկան - *Vicia cracca*



Լավատեր թուրինգիական - *Lavatera turingiaca*



Սիզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Փրփրունկ վեցաթերթ - *Filipendula hexapetala*



Մատիտեղ ճնճողուկի - *Polygonum aviculare*



Ասպիրակ աղեղնեզր - *Spiraea crenata*



Կակաչ արնեյան - *Papaver orientale*



Կատվադաղձ Մուսիկի - *Nepeta mussini*

Տարածաշրջանում լայն տարածում ունեն Ազնվամորու (*Rubus idaeus*), Վարդ առատափուշի (*Rosa spinosissima*), Մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և Ասպիրակ աղեղնեզրի (*Spiraea crenata*) մացառուտները, որոնց արանքներում հանդիպում են Ծորենի սովորականը (*Berberis vulgaris*) և Լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Արոսենի սովորական (*Sorbus aucuparia*) և Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*) ծառեր: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները: Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲԴՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 10- ում, իսկ դրանց լուսանկարները՝ Նկար 9-ում:

Աղյուսակ 10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակ		ԲԴՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Անողնուցուկ Գրոսհեյմի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz.	EN
2	Արոսենի հայաստանյան	<i>Sorbus hajastana</i> Gabr.	VU

Նկար 9. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակների լուսանկարները



Արոսենի հայաստանյան - *Sorbus hajastana* Gabr.



Անողնուցուկ Գրոսհեյմի - *Puccinellia grossheimiana* V.I.Krecz.

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում՝ ափամերձ հատվածում: Թերակղզու այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հանդիպել:

2.8.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականի լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ, ինչպես նաև մի քանի կարմիրգրքային տեսակներով: Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Տարածաշրջանում ամենատարածված և բազմաքանակ կենդանիներն են մկնանման կրծողները և մանր թռչնատեսակներ, որոնք հանդիսանում են գիշատիչ թռչունների և կենդանիների, այդ թվում կարմիրգրքային կենդանատեսակներից որոշների համար որպես կերային օբյեկտներ: Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 11-ում: Աղյուսակում ընդգրկված կենդանիների որոշ տեսակները ներկայացված են Նկար 10-ում:

Աղյուսակ 11. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	Columba livia
2	Ժուլան	Lanius collurio
3	Լոր	Coturnix coturnix
4	Խայտաբղետ քարակեռնեխ	Monticola saxatilis
5	Հոպուպ	Upupa epops
6	Մեծ ճուռակ	Buteo buteo
7	Մոխրագույն ագռավ	Corvus corone
8	Մոխրագույն արտույտ	Calandrella rufescens
9	Մոխրագույն կաքավ	Perdix perdix
10	Ոսկեգույն մեղվակեր	Merops apiaster
11	Պարող քարաթռչնակ	Oenanthe isabellina
12	Ջրածիժանների տեսակներ	Chlidonias
13	Սև կեռնեխ	Turdus merula
14	Սևաճակատ շամփրուկ	Lanius minor
15	Սևավիզ քարաթռչնակ	Oenanthe finschii
16	Սովորական կաչաղակ	Pica pica
17	Սովորական հողմավար բազե	Falco tinnunculus
18	Սովորական ճայ	Corvus monedula
19	Սովորական որոր	Larus ridibundus
20	Սովորական սարյակ	Sturnus vulgaris
21	Սովորական սիտեղ	Sitta europaea
22	Սովորական քարաթռչնակ	Oenanthe oenanthe
23	Տափաստանային արտույտ	Melanocorypha calandra
24	Փուփոզվոր արտույտ	Galerida cristata
25	Աղվես	Vulpes vulpes
26	Աքիս	Mustela nivalis
27	Գորշուկ/ Փորսուղ	Meles meles
28	Դաշտամկներ	Microtinae
29	Համստեր	Cricetus cricetus
30	Ձյան դաշտամուկ	Chionomys nivalis
31	Նապաստակ	Lepus europaeus
32	Գայլ	Canis lupus
33	Շնագայլ	Canis aureus
34	Քարակզաքիս	Martes foina

Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող կենդանաբանականները



Լոր - Coturnix coturnix



Մխիթարացույն ագռավ - Corvus corone



Թխակապույտ աղավնի - Columba livia



Սովորական հողմավար բազն - Falco tinnunculus



Չուպուպ - Upupa epops



Սովորական սիտեղ - Sitta europaea



Ացիս - *Mustela nivalis*



Պաշտամկներ - *Microtinae*



Լապաստակ - *Lepus europaeus*



Չամստեր - *Cricetus cricetus*

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված 5 կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 12-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 12. Նախադասվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Չայերեն	Լատիներեն	
1	Չարթ խխուռչ	<i>Gyraulax laevis</i>	EN
2	Մոխրաայտ սուզակ	<i>Podiceps griseogenax</i> Boddaert	VU
3	Թռչան կարապ	<i>Cygnus olor</i>	VU
4	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
5	Խայտաբաղ	<i>Tadorna tadorna</i>	VU
6	Լայնակտուց բաղ	<i>Anas clypeata</i> Linnaeus	VU
7	Սպիտակաճակատ սագ	<i>Anser albifrons</i>	VU

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Չայերեն	Լատիներեն	
8	Կարմիր ցին	<i>Milvus milvus</i>	EN
9	Սպիտակապոչ արծիվ	<i>Haliaeetus albicilla</i> Linnaeus	EN
10	Գիշանգլ	<i>Neophron percnopterus</i> Linnaeus	EN
11	Տախաստանային արծիվ	<i>Aquila nipalensis orientalis</i> Hodgson	VU
12	Աղավնաբազե	<i>Falco columbarius</i> Linnaeus	DD
13	Սապսան	<i>Falco peregrinus</i> Tunstall	VU
14	Չայկական որոզ	<i>Larus armenicus</i> Buturlin	VU
15	Ներկարար	<i>Coracias garrulus</i>	VU

EN (Endangered) - վտանգված տեսակ

VU (Vulnerable) - խոցելի տեսակ

Նկար 11. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ «Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակների լուսանկարները



Տափաստանային արծիվ - *Aquila nipalensis*



Ներկարար - *Coracias garrulus*



Չայկական դրոշ - *Larus armenicus*



Մոխրաայտ սուզակ - *Podiceps grisegena* Boddaert



Լայնակտուց բադ - *Anas clypeata* Linneus



Չարթ խխուկ - *Gyraulus laevis*

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է «Սևան» ազգային պարկի տարածքում՝ ափամերձ հատվածում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հանդիպել:

2.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը

Սևան համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրության համար հիմք են հանդիսացել համայնքի ավագանու կողմից 26.12.2016թ.-ին ընդունված «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիր» թիվ 11-Ն որոշումը և Սևան համայնքի անձնագիրը:

Սևան համայնք՝ ք. Սևան և գ. Գագարին

Բնակավայրը 1842թվականին հիմնադրել են եկվոր ռուս աղանդավորները և կոչել են Ելենովկա: 1935թվականին այն վերանվանվեց Սևան: 1961 թվականին բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և 10 գյուղով/, իսկ 1967թվականին՝ հանրապետական ենթակայության: Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը, որպես ինքնուրույն համայնք, ներառում է Սևան քաղաքը, Յամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը, Գագարին գյուղը:

Համայնքի վարչական տարածքը՝ 1764.68հա ,

Բնակչությունը՝ 25919 մարդ:

Հեռավորությունը մարզկենտրոն Գավառից՝ 37 կմ, հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 60 կմ, Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1925 մ:

Սևան համայնքը գտնվում է Սևանա լճի Հյուսիս-Արևմտյան ափին՝ ծովի մակերևույթից 1925 մետր բարձրության վրա, լճից 200-250մ հեռավորության վրա:

Սևան քաղաքային համայնքը հարակից է Վարսեր, Ծովագյուղ, Լճաշեն համայնքներին (հեռավորություն նախատեսվող գործունեության վայրից՝ 4 կմ:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամբակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում: Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առաձևանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով: Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության գործի զարգացումը, որոնց ուղղությամբ իրականացվում են ծրագրեր՝ ներգրավելով տեղական և միջոցային կազմակերպությունների ներուժը: Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ, բանկային մասնաճյուղեր, կապի օպերատորների մասնաճյուղերի գրասենյակներ: Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 7 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 213 բազմաբնակարան շենք: Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների՝ 5 մանկապարտեզների, Հովի. Այվազովսկու անվան արվեստի, Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգի, Ս. Զաքարյանի անվան համայնքային մշակութային կենտրոնի գործունեության շնորհիվ նախադպրոցական կրթության իրականացումը, մարզամշակութային առօրյան, երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումն իրականացվում է

համակարգված և նպատակային: Համայնքում գործում է 3 նախակրթարան՝ «Սևանի թիվ 1 «Բողբոջ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, Սևանի թիվ 5 և Սևանի թիվ 6 միջնակարգ դպրոցների հենքի վրա: Համայնքային մշակութային կյանքի դիման ապահովում են «Սևան», «Հայրողիք», «Նազանի» ժողովրդական պարերի համույթները, տիկնիկային թատրոնը, Հ. Իգիթյանի անվան գեղագիտական դաստիարակության Սևանի մասնաճյուղը: Համայնքում գործում է 4 հիմնական, 3 միջնակարգ և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, քոլեջ, ֆրանկոֆոն ակումբ, Ջրային մարզաձևերի մարզադպրոց: Սևանում է գտնվում «Սևան զագային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուծների և ցուցադրությունների եզակի վայր է:

Համայնքում գործում է «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ն, որը սպասարկում է Սևան և հարակից համայնքների բնակչության բժշկական պահանջները:

2.10 Պատմամշակութային և բնության հուշարձանները

Գեղարքունիքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գործառույթներն առավել զարգացնելու համար: Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության: Սևան համայնքում առկա են բազմաթիվ հուշարձաններ:

ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 9-ին թիվ 80-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Սևան համայնքի տարածքում կան թվով 4 պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 13-ում:

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում:

Աղյուսակ 13. Սևան համայնքի պատմամշակութային հուշարձանները

4.4. Սևան քաղաք

N	Հուշարձանա խումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական, տեղական	Ծանոթագրություն	Հուշարձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարը)
1.			ԱՄՐՈՑ ՄԵԾԵՓ	մթա 3-1հզմ	0,6 կմ հս-ամ	Հ	Գունաձոր թաղամաս, Մեծեփի գագաթին, քաղաքի հեռուստաաշտա-րակի մոտ
2.			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-20-րդ դդ.	հվ-աե մասում	Տ	Ցամաքաբերդ թաղամասի եզրին, երկաթգծից ձախ
			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ընկած գետնին, ստորին մասը չի

						պահպանվել
		խաչքար	11-րդ դ.		<	ընկած գետնին
		խաչքար	12-13-րդ դդ.		<	ընկած գետնին, եզրերը վնասված, վերին ձախ մասը չի պահպանվել
		խաչքար	12-13-րդ դդ.		<	երկատված, կանգնեցված գետնին
		խաչքար	14-15-րդ դդ.		<	ընկած գետնին, եզրերը ջարդված
		խաչքար	14-15-րդ դդ.		<	ընկած գետնին, վերնամասը՝ չի պահպանվել
		տապանաքար՝ լիմեցի Կարապետ վարդապետի	16-17-րդ դդ.		S	
		տապանաքար՝ Թումանի	1701 թ.		S	
		տապանաքար՝ Խաչատուրի	1708 թ.		S	
		տապանաքար՝ Մասումի	1731 թ.		S	
3.		ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	9-20-րդ դդ.	հս-ամ մասում	S	Գոմաձոր թաղամասի հս եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում
4.		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	հս եզրին	<	Ցամաքաբերդ թաղամասում, «Սևան» հյուրանոցից 300մ ատ
5.		ԵԿԵՂԵՑԻ	9-10-րդ դդ.	0,1 կմ հս	S	Գոմաձոր թաղամաս, միջնադարյան գերեզմանոցի տարածքում, ավերված
		գերեզմանոց	10-17-րդ դդ.		S	եկեղեցուց ատ
	5.1.1	խաչքար	12-րդ դ.		<	խրված հողի մեջ
	5.1.2	խաչքար՝ Սարգսի	12-13-րդ դդ.		<	ընկած գետնին, երկատված
	5.1.3	խաչքար	12-13-րդ դդ.		<	կիսով խրված հողի մեջ
	5.1.4	խաչքար	12-13-րդ դդ.		<	խրված հողի մեջ
	5.1.5	խաչքար	12-13-րդ դդ.		<	ընկած գետնին, երկատված
	5.1.6	խաչքար	12-13-րդ դդ.		<	ընկած գետնին, երկատված
	5.1.7	խաչքար	13-րդ դ.		<	խրված հողի մեջ
	5.1.8	խաչքար	13-րդ դ.		<	ընկած գետնին, եզրերը վնասված
	5.1.9	խաչքար	14-15-րդ դդ.		<	ընկած գետնին
6.		ԵԿԵՂԵՑԻ	1924 թ.	հս-ամ մասում	S	Գոմաձոր թաղամասի եզրին, Մեծեփ սարի լանջին
7.		ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ	19-րդ դ.	հս-ատ մասում	S	Ցամաքաբերդ թաղամասի կնտ.-ում
		խաչքար	11-րդ դ.		<	ագուցված ատ պատին, արտաքուստ
		խաչքար	12-13-րդ դդ.		<	հվ ավանդատանը, ձախ եզրը ջարդված
		գերեզմանոց	11-19-րդ դդ.		S	եկեղեցուց հվ
	7.3.1	խաչքար	12-րդ դ.		<	ընկած գետնին
	7.3.2	խաչքար	14-15-րդ դդ.		<	խրված հողի մեջ

	7.3.3		խաչքար	14-15-րդ դդ.		<	պատվանդանին
8.			խաչքար	9-10-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, «Սևան» հանգստյան տան տարածքում, պատվանդանին, վերին և ստորին ձախ անկյունները կտրված
9.			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
10			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
11.			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
12.			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
13.			խաչքար	11-12-րդ դդ.	հս-աե մասում	<	Յամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, նորաշեն սրբատեղիի բեմին
14.			ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1980 թ.	ք. մ.	S	Գոմաձոր թաղամաս ճարտ.՝ Ս. Մանվելյան
15.			ՄԱՏՈՒԴ ԹՈՒԿՍ ՄԱՆՈՒԿ	16-րդ դ.	ամ մասում	S	Գոմաձոր թաղամաս, Մեծեփ սարի աե լանջին
			խաչքար	12-րդ դ.		<	ագուցված աե պատին, ներքուստ
			խաչքար	12-13-րդ դդ.		<	ագուցված ամ պատին, ներքուստ
			խաչքար	12-13-րդ դդ.		<	ներսում, երկատված
			խաչքար	12-13-րդ դդ.		<	ընկած գետնին
			խաչքար	14-15-րդ դդ.		<	կանգնեցված ներսում
16.			ՄԱՏՈՒԴ ԹՈՒԿՍ ՄԱՆՈՒԿ	16-17-րդ դդ.	հս մասում	S	Յամաքաբերդ թաղամաս
17.			ՌԵՍՏՈՐԱՆԻ ՇԵՆՔ. «ԾՈՎԻՆԱՐ» ՌԵՍՏՈՐԱՆԸ	1963 թ.	Սևանի ափին	S	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
18.			ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ. ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔԸ	9-20-րդ դդ.	հս-աե մասում	<	թերակղզում
			Եկեղեցի ս. Առաքելոց	874 թ.		<	
18.1.1.			խաչքար	10-րդ դ.		<	հենած բեմին, 3 խաչքարերից ձախից 1-ինը
18.1.2.			խաչքար՝ Ղազարի	13-րդ դ.		<	հենած հս պատին
18.1.3.			խաչքար	14-15-րդ դդ.		<	հենած հվ պատին, ներքուստ
18.1.4.			խաչքար՝ Ներսեսի	1425 թ.		<	հենած հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
18.1.5.			խաչքար	1510 թ.		<	հենած խորանի հս պատին, վերին և ստորին աջ անկյունները՝ կտրված, թվակիր

18.1.6.		խաչքար	16-րդ դ.		<	կանգնեցված հվ պատի մոտ, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
18.1.7.		խաչքար	16-րդ դ.		<	բեմին, արձանագիր
18.1.8.		խաչքար՝ Հայրապետի և Հրեպեկայի («Խաչելություն»)	1653 թ.		<	խորանում, պատվանդանին կազմող՝ Տրդատ բերվել է 19-րդ դ. կեսին՝ Նորաշեն գյուղից
18.1.9.		տապանաքար	1875 թ.		<	ներսում, բերված Բջնիից
		եկեղեցի ս. Աստվածածին	874 թ.		<	
18.2.1.		գավիթ	1653 թ.		<	
	18.2.1.1.	խաչքար	9-10-րդ դդ.		<	
	18.2.1.2.	խաչքար	9-10-րդ դդ.		<	
	18.2.1.3.	խաչքար	10-11-րդ դդ.		<	հենած հս պատին, ներքուստ, եզրերը ջարդոտված
	18.2.1.4.	խաչքար	11-րդ դ.		<	հենած հս պատին, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.5.	խաչքար	11-12-րդ դդ.		<	պահպանվել է միջին մասը
	18.2.1.6.	խաչքար	11-12-րդ դդ.		<	տեղադրված ամ պատին, ստորին ծախ և վերին աջ անկյունները՝ ոտրված
	18.2.1.7.	խաչքար	12-րդ դ.		<	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.8.	խաչքար՝ «Թևակոր խաչ»	12-րդ դ.		<	հենած հվ պատին, արտաքուստ, վերին խաչաթևը չի պահպանվել, արձանագիր Խաչքարը Սրան է բերվել Դրմաշեն գյուղից
	18.2.1.9.	խաչքար	12-13-րդ դդ.		<	ստորին մասը չի պահպանվել
	18.2.1.10.	խաչքար	12-13-րդ դդ.		<	եզրագոտին ջարդոտված
	18.2.1.11.	խաչքար	12-13-րդ դդ.		<	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.12.	խաչքար	12-13-րդ դդ.		<	հենած եկեղեցու ամ պատին, արտաքուստ, մուտքից ծախ
	18.2.1.13.	խաչքար	13-րդ դ.		<	աջ եզրը կոտրված
	18.2.1.14.	խաչքար	13-րդ դ.		<	բեկոր
	18.2.1.15.	խաչքար	15-րդ դ.		<	
	18.2.1.16.	խաչքար	15-16-րդ դդ.		<	հենած ամ պատին, արտաքուստ
	18.2.1.17.	խաչքար	15-16-րդ դդ.		<	
	18.2.1.18.	խաչքար	15-16-րդ դդ.		<	ներսում
	18.2.1.19.	խաչքար	15-16-րդ դդ.		<	տեղադրված հվ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.20.	խաչքար	15-16-րդ դդ.		<	հենած հս պատին, ներքուստ
	18.2.1.21.	խաչքար	15-16-րդ դդ.		<	հենած հվ պատին, ներքուստ
	18.2.1.22.	խաչքար՝ Խաթունի	15-16-րդ դդ.		<	հենած հս պատին
	18.2.1.23.	խաչքար	15-16-րդ դդ.		<	տողադրված հվ պատին, ներքուստ
	18.2.1.24.	խաչքար	1551 թ.		<	հենած հս պատին, բեկոր
	18.2.1.25.	խաչքար	16-րդ դ.		<	հենած ամ պատին, արտաքուստ, մուտքից աջ
	18.2.1.26.	խաչքար	16-րդ դ.		<	վերնամասը՝ չի պահպանվել

	18.2.1.27.	խաչքար	16-րդ դ.		<	հենած հս պատին, եզրերը ջարդոտված
	18.2.1.28.	խաչքար	16-րդ դ.		<	արձանագիր, ստորին եզրը չի պահպանվել
	18.2.1.29.	խաչքար	16-17-րդ դդ.		<	հենած հս պատին, ստորին և վերին եզրերը կոտրված
	18.2.1.30.	խաչքար	16-17-րդ դդ.		<	հենած հս պատին, ներքուստ
	18.2.1.31.	խաչքար	16-17-րդ դդ.		<	աջակողմյան մասը չի պահպանվել
	18.2.1.32.	խաչքար	16-17-րդ դդ.		<	տեղադրված հվ պատին, վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.33.	խաչքար	16-17-րդ դդ.		<	վերնամասը՝ չի պահպանվել
	18.2.1.34.	խաչքար	16-17-րդ դդ.		<	պահպանվել է միջնամասը
	18.2.1.35.	խաչքար	16-17-րդ դդ.		<	արձանագիր, ստորին մասը չի պահպանվել
	18.2.1.36.	խաչքար	1615 թ.		<	հվ-ամ անկյան մոտ, վերին աջ անկյունը կոտրված
	18.2.1.37.	տապանաքար	15-16-րդ դդ.		S	հվ պատի մոտ, եզրերը ջարդոտված
		Եկեղեցի ս. Հարություն	305 թ, 9-րդ դ.		<	ավերված
		ճեմարանի շենք	9-րդ դ.		<	վրկնգ.՝ 1834-1835 թթ., 1907թ.
		գերեզմանոց	9-16-րդ դդ.		<	Եկեղեցիների շուրջը
18.5.1.		խաչքար	9-10-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 10 մ աե, կանգնեցված գետնին, ձախ եզրագոտին ջարդված
18.5.2.		խաչքար	9-10-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին
18.5.3.		խաչքար	12-13-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճաններից աջ, 4 խաչքարերից ձախից 1-ինը
18.5.4.		խաչքար	1212 թ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում
18.5.5.		խաչքար՝ Աբլիասանի	1227 թ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ աե, վերնամասը՝ կոտրված
18.5.6.		խաչքար	1462 թ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, թվակիր
18.5.7.		խաչքար՝ Պողոշի	15-16-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում
18.5.8.		խաչքար	15-16-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, երկատված
18.5.9.		խաչքար՝ Սուլթանի	15-16-րդ դդ.		<	ս. Աստվածածին Եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած 4

						խաչքարերից ձախից 1-ինը
18.5.10.		խաչքար	15-16-րդ դդ.		<	ս. Աստվածածին եկեղեցուց 100 մ աե, երկատված, ընկած գետնին
18.5.11.		խաչքար	1557 թ.		<	ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից աջակողմյանը
18.5.12.		տապանաքար	15-16-րդ դդ.		S	ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվող նախատեսվող գործունեության տարածքում:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, Սևան համայնքում բնության հուշարձաններ չկան: Աղյուսակ 14-ում ներկայացվում է Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները:

Աղյուսակ 14. Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները

NN	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
2.	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
3.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
4.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
5.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6.	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
7.	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
8.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
9.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
10.	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
11.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
12.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
13.	«Վանքի աղբյուր» աղբյուրներիխումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
14.	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
15.	«Ենթալայան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

Սևան քաղաքում է գտնվում Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին: Եկեղեցու շինարարական աշխատանքներն սկսվել են 2009 թվականին և ավարտվել 2015 թվականին: Այն կառուցվել է ֆրանսիաբնակ ազգային բարերար Սարգիս Պետոյանի բարերարությամբ՝ ի հիշատակ նրա ծնողների՝ Ավետիս և Թագուհի Պետոյանների:

Սևան քաղաքում է գտնվում նաև Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի խաչքարը, Սևանի քաղաքային Պանթեոնը, Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիրը:

Սևանա կղզին (այժմ՝ թերակղզի) դեռևս անհիշելի ժամանակներից սրբատեղի է եղել: Հեթանոսական ժամանակներում այստեղ բազին եղել, որը կործանել և նրա տեղում Սբ Հարություն եկեղեցին է հիմնադրել Սբ Գրիգոր Լուսավորիչը: Պատմական աղբյուրները և վաղ քրիստոնեական ավանդությունը վկայում են, որ նա հայոց Տրդատ Գ Մեծ արքայի պատվին կառուցել է տալիս նաև Սբ Հովհաննես Կարապետ մատուռը (հայտնի է, որ Տրդատ արքան մկրտվելուց հետո ստանում է Հովհաննես անունը): Հետագայում այդ մատուռի հիման վրա կառուցվել է Սբ Հովհաննես Կարապետ եկեղեցին, որը կանգուն է մինչև օրս:

Սևանա թերակղզու հոգևոր կյանքի վերածնունդը 9-րդ դարն է: Այս վերածնունդը կախվում է Աշոտ Առաջին Բագրատունու դուստր, Սյունյաց Վասակ Գաբուռն իշխանի այրի և Մարիամի և Մաշտոց վարդապետ Եղիվարդեցու, որի ջանքերով ստեղծվում է վանական միաբանություն, անունների հետ:

Մանվել վարդապետ Կյումուշխանցու բնորոշմամբ՝ Սևանա վանքը դառնում է «առաջնորդարան և ուսումնասեր անձանց վարժարան»: Ե՛ի պատահական չէ, որ մենաստանը տվել է այնպիսի սաներ ինչպիսիք են Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը, Սարգիս Սևանցին, որոնք եղել են ազգի նվիրագույն հայրապետները, Ստեփանոս Կրոնավորը, Սարգիս Իմաստասերը և այլք: Հնում Սևանա վանքի և նրա սրբությունների համբավը մեծ է եղել: Երեք անգամ Սևան ուխտի գնալը հավասար է համարվել Երուսաղեմ ուխտի գնալուն:

Բազում տարիներ անց՝ Խորհրդային իշխանության առաջին տարիներին, վանքի ունեցվածքը բռնագրավվեց ու հենց աստվածամերժության այս շրջանում քանդվեց Սբ Աստվածածին եկեղեցին: Արդեն իսկ 1990թ. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Եպիսկոպոս Ներսիսյանի (1999թ.-ից Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոս) նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Վազգեն Ա օրհնությամբ վերաբացվեց Սևանավանքը:

Նույն տարում բացվեց Սևանի հոգևոր դպրանոցը: Խորհրդային հակաեկեղեցական անգութ տարիներից հետո կրոնական կյանքը վերահաստատվում Սևանա թերակղզում: 1994թ. ի պատիվ և ի հարգանս երանավետ Վազգեն Ա հայրապետի, Գարեգին Սրբազանի օրհնությամբ դպրանոցը անվանվեց Վազգենյան, որը դարձավ հայ հոգևորականության դարբնոցը: Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի ողջ գոյության ընթացքում այն սիրով և գորովանքով խնամվել է մեծագործ բարերարների՝ ի մասնավորի Գառնիկ քին Հալաջյանի, Տեր և Տիկին Նուբար և Անիթա Ջեսուրյանների, Տեր և Տիկին Սարգիս և Սիրան Գաբրիելյանների , Տեր և Տիկին Նազար և Արտեմիս

Նազարյանների, Տեր և Տիկին Սարգիս և Թագուհի Սուլթանյանների, Տեր և Տիկին Ռոբերթ և Ջուլիետ Աբելյանների կողմից: Տեր և Տիկին Գառնիկ և Անի Յակուբյանների բարերարությամբ կառուցվում է ուսանողական նոր ննջարանային մասնաշենք ինչպես և Սբ Հակոբ Մծբնա մատուռը:

Տրանսպորտային ենթակառուցվածքը

Նախագծի մշակման շրջանակներում դիտարկվել են Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով ազգային պարկով և դրան հարող տարածքներով անցնող միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների՝ ջրածածկման (1903.5 նիշը) և ողողման (1905.0 նիշը) հետ կապված հիմնախնդիրները: Այդ թվում՝ ամրագրվել են ջրածածկման ենթակա ճանապարհային հատվածները և դրանց ջրածածկման հավանական տարեթվերը (մինչև 2029 թվականը): Նախանշվել են մայրուղիների՝ ջրածածկումից հեռացնելու միջոցառումները, ներառյալ՝ ավտոճանապարհների կառուցման խոշորացված ծավալները, ինչպես նաև այդ նպատակով հողամասերի օտարման ծախսերը:

Մայրուղիների ջրածացկման խնդիրը լուծելու համար նախագծման փուլում դիտարկվել են մի շարք տարբերակներ, որի արդյունքում ընտրվել է Տրանսպորտային ուրվագծում /գծագիր «Տրանսպորտային ուրվագիծ»/ ներկայացված մայրուղիների վերակառուցման առաջարկվող ծրագիծը:

Հարկ է նշել, որ ավտոմոբիլային ճանապարհների նոր ծրագծի տարբերակը մշակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ, կրում է առաջարկության բնույթ և ենթակա է հետագա ճշտման:

Սևանա լճի պարագծով են անցնում 4 միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ (այսուհետև՝ մայրուղի)։

1. Լճի հյուսիս-արևմուտքով, 12.0 կմ երկարությամբ՝ Մ-4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման մայրուղին.

2. Լճի հարավ-արևմուտքով, 64.0 կմ երկարությամբ՝ Մ-10 Սևան-Մարտունի Գետափ մայրուղին.

3. Լճի հարավով, 38.0 կմ երկարությամբ՝ Մ-11 Մարտունի-Վարդենիս-Ադրբեջանի սահման մայրուղին.

4. Լճի հյուսիս-արևելքով, 96կմ երկարությամբ՝ Մ-14 Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս մայրուղին:

Մ-4 մայրուղին լճափով անցնելու տեղամասում I կարգի է, քառաշերտ երթևեկային մասով և բաժանարար գոտիով, զբաղեցնում է 35մ լայնությամբ տարածք: Մ-4 մայրուղին 1905 նիշից ցածր մակարդակով է անցնում Մ-14-ի ճամփաբաժանին չհասած, կմ 67 – կմ 69 հատվածում: 1700մ երկարությամբ այդ հատվածում ճանապարհը կարող է անցկացնել 1908 նիշով՝ տեղափոխելով այն երկաթուղուն զուգահեռ, մոտ 50մ հեռավորությամբ:

Մ-10 մայրուղին II կարգի է, երկշերտ երթևեկային մասով և 15մ հողային պաստառի լայնությամբ:

Ներկայումս մայրուղային ճանապարհների որոշ տեղամասեր ջրածածկման վտանգի տակ են: Այդ առումով վատթար վիճակում է Մ-10 մայրուղու սկզբնամասը, Լճաշեն համայնքի միջակայքով անցնող մոտ 3կմ երկարությամբ հատվածը: 2009 թվականին ճանապարհն այդ հատվածում բարձրացվեց մինչև 1902 նիշը: Լճի կողմից շարված են մետաղացանցե արկղեր՝ լցված քարով (գաբիոններ): Ներկայումս ճանապարհի հակառակ կողմում ճահիճ է գոյացել, որին սնուցում են լիճը՝ ճանապարհի հողային պաստառի միջով ջրի ներթափանցման հետևանքով և շրջակա միջավայրից դեպի լիճ հոսող տեղումների և ձնհալի ջրերը: Ճահիճի մակարդակը տարվա ընթացքում փոփոխական է. հաղորդակից անոթների սկզբունքով այն ամռան ամիսներին գրեթե հավասարվում է լճի մակարդակին (լիճը սնուցում է ճահիճին), իսկ գարնանային ու աշնանային ամիսներին՝ հորդառատ տեղումների և ձնհալի հետևանքով ճահիճի մակարդակը բարձրանում է (ճահիճը սնուցում է լճին), ինչն այս ցիկլի մեջ ամենասանցանկալի երևույթն է: Բացի այդ, ճահիճի գոյացումից հետագայում խուսափելու համար կարիք կլինի մինչև 1905.0 մ բարձրացնել հողի նիշը, ինչը գրունտային ջրերի բարձր մակարդակի հետևանքով կարող է հանգեցնել հողերի աստիճանական աղակալմանը: Մյուս կողմից, եթե նույնիսկ հաշվի չառնենք այս տիպի երևույթը, ապա լճափի 3կմ երկարությամբ այս հատվածը հավերժ կորած կլինի որպես լողափ, իսկ ճանապարհի մակերևույթից անձրևաջրերը դեպի լիճ կտանեն տարատեսակ քսայուղեր, իսկ ավտոմոբիլային արտանետումները, հատկապես կոշտ, կաղտոտեն լճի ջուրը:

Մ-10 մայրուղու Լճաշեն-Հայրավանք հատվածում լճափը ամենակտրտվածն է, բազմաթիվ ծովախորշերով և թերակղզիներով, ընդ որում, նշված տեղամասում ճանապարհը անցնում է լճի անմիջապես ափով և 1905.0մ նիշից ցածր նիշերով: Գործող ճանապարհի՝ ջրածածկման ենթակա տեղամասերն առանձին-առանձին հեռացնելը նպատակահարմար չէ, քանի որ կխաթարվի ճանապարհի ծրագծի անընդհատությունը:

Ինչպես նշվել է վերևում, մայրուղային ճանապարհների նոր ծրագծի տարբերակը կրում է առաջարկության բնույթ, ուստի ենթակա է լրացուցիչ քննարկման: Ընդ որում եթե քննարկումների արդյունքում ընդունվի Լճաշեն համայնքի տարածքում լիցքի միջոցով ճանապարհահատվածի նիշը բարձրացնելու և ռեկրեացիոն կամ տնտեսական նպատակների համար տարածքը օգտագործելու տարբերակը, անհրաժեշտ կլինի կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ ապահով ինժեներական լուծումների ընտրության նպատակով:

Սույն նախագծի տրանսպորտային ուրվագծով նախատեսված առաջարկությամբ, նախատեսվում է Մ-10 մայրուղու Լճաշեն-Հայրավանք հատվածում նոր ճանապարհահատված կառուցել, որը կշրջանցի 1905.0 նիշը, ներդաշնակորեն կկրկնի լճափի ելևէջները և բավարար լայնությամբ լողափ կապահովի: Նորը կառուցելուց հետո հին ճանապարհը զբաղեցնող տարածքը ռեկուլտիվացիայի կենթարկվի և տարծքը կօգտագործվի որպես լողափ: Քանի որ Լճաշեն-Հայրավանք տարածքում ափի ռեյեֆը շատ կտրտված է ու ժայռային՝ նպատակահարմար կլինի խորը հանույթների տեղերում

ճանապարհն անցկացնել կարճ թունելներով: Թունելները կարելի է կառուցել բաց եղանակով և հետո ծածկել, ստեղծելով էկոդուկներ՝ մարդանց, ընտանի և վայրի կենդանիների մուտքն ու ելքը անկաշկանդ ապահովելու համար: Առանձնացված են թվով 10 այդպիսի տեղամասեր, որոնց միջին երկարությունը կազմում է մոտ 200մ: Այդ թունելների կառուցումն ու շահագործումը համեմատաբար քիչ ծախսատար կլինեն, շնորհիվ բաց եղանակով կառուցման և բնական օդափոխության հնարավորության:

Լճաշեն-Հայրավանք տեղամասի երկարությունը կազմում է 24.3կմ: Քանի որ առաջարկվող նոր ծրագծով ճանապարհը մի քանի հատվածում միանում է հինին, ուստի հնարավորություն է ընձեռնվում ծրագիծը բաժանել հինգ տեղամասերի՝ առանձին-առանձին կառուցելու և շահագործման հանձնելու նպատակով: Դա կհեշտացնի և՛ կառուցման աշխատանքները և շահագործումը՝ այն առումով, որ ամեն մի հատվածի կառուցումից հետո կարելի է անմիջապես այն շահագործման հանձնել:

Ստորև աղյուսակում բերված են Լճաշեն-Հայրավանք տեղամասի վերը նշված հինգ հատվածների երկարությունները.

Աղյուսակ N8.-1

Տեղամասի անվանումը	Երկարությունը, կմ
Լճաշեն-Նորաշեն	7.9
Նորաշեն-Ծովազարդ	2.2
Ծովազարդ-Լճափ	3.9
Լճափ-Բերդկունք	6.55
Բերդկունք-Հայրավանք	3.75
Ընդամենը	24.3

Ճանապարհահատվածների կառուցման առաջնահերթությունը կթելադրվի տվյալ հատվածում լճի նկատմամբ գործող ճանապարհի ամենացածր նիշով (տես Աղյուսակ 8-2): Այսպես, օրինակ, ընդունվել է, որ գործող ճանապարհը պետք է հեռացվի լճափից այն ժամանակ, երբ լճի մակարդակը ցածր է մնում ճանապարհից 1.5 մետրով:

Դրությունը բարդ է Մ-11 մայրուղու Ծովինար-Արծվանիստ-Կարճաղբյուր-Ծովակ տեղամասում, որտեղ ճանապարհը տեղ-տեղ անցնում է 1903.5 նիշից ցածր մակարդակով: Այս տարածքում լճափի թեքությունն անչափ փոքր է և 1903.5մ-ի հասնելու դեպքում լիճը կառաջանա 300-500 մետրով: Այս տեղամասում հարկ կլինի գործող ճանապարհը լճափից հեռացնել երկու հատվածներով:

Առաջինը՝ Ծովինար-Արծվանիստ 4.2կմ երկարությամբ հատվածն է: Այս տարածքում ռելյեֆը ցածր է հատկապես Արծվանիստ գյուղի մատուցներում և գյուղից հետո: Դա է պատճառը, որ այդ տեղամասերում նախատեսվել է երկու ուղեկամուրջ 850մ և 450մ երկարությամբ:

Երկրորդը՝ Կարճաղբյուր-Ծովակ հատվածն է 8.6կմ երկարությամբ: Կարճաղբյուր գյուղի դիմաց լիճն արդեն ողողել է մայրուղու կողնակը և ընդհուպ մոտեցել երթևեկային մասին: Չնայած, որ ճանապարհը լճից բարձր է 2.7մ, սակայն ճանապարհի հիմնատակը բաղկացած է մանրահատիկ ավազից և ալիքները անկաշկանդ ողողում են ճանապարհի հիմնատակը մոտ 100մ երկարությամբ հատվածում: Կարճաղբյուր-Ծովակ տեղամասի միջնամասում ճանապարհն անցնում է ցածր նիշերով և տեղ-տեղ լճի մակարդակը միայն

մեկ մետրով է ցածր ճանապարհից: Բնականաբար, այդ տեղամասերում սկսվել է ճահճացման երևույթը:

Մ-14 մայրուղին III կարգի է, հողային պաստառի լայնությունը 12մ է: Մ-14 Ծովագյուղ-Շորժա-Վարդենիս ճանապարհի միայն Շորժա համայնքի սահմաններում 40 մ երկարությամբ հատվածն է անցնում 1905 նիշից ցածր մակարդակով: Այդ տեղամասում ճանապարհին անցնում է երկաթուղուն զուգահեռ, մոտ 100մ հեռավորությամբ: Երկաթուղու նիշը 1906.8 մ է: Այստեղ կարելի է առաջարկել երկու տարբերակ, կամ էլ այդ տարբերակների համատեղումը: Առաջինը՝ ճանապարհի նիշը բարձրացնել մինչև 1905.5 մ մակարդակը, իսկ երկրորդը՝ ճանապարհը տեղաշարժել դեպի երկաթուղին:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախտատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար սուղել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն տարածքում տեղադրված $5մ^3$ ծավալով պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կտեղադրվի է շին. հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը, ըստ պահանջի, կհեռացվի որպես շինադր:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ

տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոխված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):
- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
 - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
 - Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
 - Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
 - Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:
 - Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

3.3.4 Թափոնների կառավարում

Հանգստի գոտու տարածքում աղբահանության նպատակով տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի հանգստի գոտու տարածքը անհրաժեշտ է կահավորել աղբամաններով՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով, ինչը լիովին ապահովված է ընկերության կողմից: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում (ամբողջ շինարարության ժամանակահատված) կառաջանան կենցաղային աղբ՝ 70-80կգ և շինարարական աղբ՝ 120մ³ ծավալով: Առաջացող շինաղբը կպահվի համապատասխան պարկերով, ծածկի տակ, մինչև տեղափոխումը համայնքի կողմից տրամադրված աղբավայր, տեղափոխումը կիրականացվի ըստ անհրաժեշտության:

Գոյություն ունեցող պարիսպի ապամոնտաժման աշխատանքներից առաջացող 96խմ շինաղբը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ

- ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելուն պատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

3.3.7 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Նախատեսվող հանգստի գոտու հարակից տարածքները բավականին ուրբանիզացված են: Հանգստի գոտու տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների

կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրույթներին համապատասխան:

- 3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:
- 4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):
- 5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հանգստի գոտու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հեկյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մոնիթորինգը
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համարՆշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում

		(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
Հողային ռեսուրսներ	Հողի որակ	<p>(f) Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ</p> <p>(g) Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահետսավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:</p> <p>- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.</p> <p>(i) Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ</p>

